

# «Ագրոսպասարկում» ԱՄ Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարտիրոսյան փողոց հ. 1 և հ.1/2  
հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծի

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
(Լրամշակված տարբերակ)



ՆԱԽԱԶԵՌՆՈՂ՝

«Ագրոսպասարկում» ԱՄ Շահումյանի  
շրջանային միավորում» ԲԲԸ

**ԵՐԵՎԱՆ**

2025

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

|  |           |
|--|-----------|
| 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....  | 7         |
| 2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ<br>ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... | 8         |
| 3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ<br>ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ.....             | 8         |
| 4.1 Նախադասվող գործունեության համառոտ նկարագիր.....                                      | 13        |
| 4.1.1. Ճարտարապետական լուծումներ և տեխնիկական ցուցանիշներ.....                           | 13        |
| 4.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում.....  | 14        |
| 4.1.3. Գազամատակարարում.....   | 15        |
| 4.1.4. Զեռուցում և օդափոխություն .....   | 15        |
| 4.1.5. Էլեկտրամատակարարում.....  | 17        |
| 4.2 Շինարարության կազմակերպում.....  | 18        |
| <b>4.3 ԻՆՏԵՆՆԵՐԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ .....</b>                             | <b>19</b> |
| 5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .....  | 22        |
| 5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը.....   | 22        |
| 5.2 Բուսական և կենդանական աշխարհ.....  | 27        |
| 5.3 Պատմամշակութային հուշարձաններ.....   | 28        |
| 5.4 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում.....                              | 28        |
| 5.5 Օդային ավազան.....   | 31        |
| 5.6 Ջրային ռեսուրսներ.....   | 32        |
| 5.7 Բնապահպանական ազդեցություններ.....   | 35        |
| <b>5.8 Նախադասվող գործունեության վարչական տարածքի սոցիալական նկարագիր .....</b>          | <b>42</b> |
| 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ<br>ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ .....                       | 42        |
| 8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ .....  | 43        |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ<br>ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ .....    | 45        |
| ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.....                                      | 49        |
| ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .....   | 51        |
| 3.1. Տեխնիկական պայման՝ Վեոլիա Ջուր.....   | 51        |
| 3.2. Տեխնիկական պայման՝ ՀԷՑ.....   | 57        |

|  |            |
|--|------------|
| <i>3.3. Տեխնիկական պայման՝ գազամատակարարում</i> .....  | 59         |
| ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ .....  | 69         |
| ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԵՐԻ<br>ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐ .....                  | 70         |
| ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ<br>(ԴԵՆԴՐՈՆԱԽԱԳԻԾ).....  | 92         |
| ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ(ԲԿՊ).....  | 100        |
| ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ .....   | 108        |
| ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,<br>ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ ԵՎ ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ .....                            | 112        |
| ՀԱՎԵԼՎԱԾ 11. ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ<br>ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ .....   | 116        |
| <b>ՀԱՎԵԼՎԱԾ 12. «ԱԳՐՈՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ԱՄ ՇՇՄ» ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ<br/>ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔԸ<br/>.....</b> | <b>117</b> |
| <b>ՀԱՎԵԼՎԱԾ 13. ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻՑ ԵՎ<br/>ՏԱՐԱԾՔԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ .....</b>                                    | <b>120</b> |
| <b>ՀԱՎԵԼՎԱԾ 14. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ<br/>ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ .....</b>   | <b>120</b> |
| <b>ՀԱՎԵԼՎԱԾ 15. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ.....</b>  | <b>120</b> |

## ՀԱՊԱՎՈՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՊՄ- անհատական պաշտպանական միջոցներ

ԲԱՄ - բողոքների արձագանքման մեխանիզմ

ԲԿՊ - բնապահպանական կառավարման պլան

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀՀՇՆ - Հայաստանի Հանրապետության շինարարության նորմեր

ՇՄԱԳ - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՇՄՆ - Շրջակա միջավայրի նախարարություն

ՇՄՄՏԿ - Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն

ՊՈԱԿ - պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՍՊԸ - սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՋևՋ – ջրամատակարարում և ջրահեռացում

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

|  |  |
|--|--|
| <b>Գործունեության նպատակ</b>                             | Բազմաբնակարան համալիրի կառուցում   |
| <b>Նախաձեռնողի անվանում, հասցե</b>                       | «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ<br>Հասցե՝ ք.Երևան, Հաղթանակ 1 փող, 462 |
| <b>Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս</b> | Կոնտակտային անձ՝ Մ. Բաբայան<br>Հեռ.՝ (+ 374 ) 91 22 36 90<br>E-mail: ececaucasus@gmail.com         |
| <b>Նախագծի պատվիրատու</b>                                | «Ագրոսպասարկում» ԱՄ Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ  |
| <b>Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը</b>              | ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջանի Մարտիրոսյան փողոց հ. 1 և հ.1/2                                  |
| <b>Հողատարածքի մակերեսը</b>                              | 8.032828+0.2004 հա   |

## ՏԵԽՆԻԿԱՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

/ 3 հերթերի համար/

|   |                       |
|---|-----------------------|
| ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ -----   | 8.032828 քմ+0.2004 քմ |
| ՓՈՂՈՑԻ ՄԱԿԵՐԵՍԸ -----   | 6830ք.մ /8.3%/        |
| ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ ԱՌԱՆՑ ՓՈՂՈՑԻ-----                             | 75470ք.մ /91.7%/      |
| ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ -----                                    | 22150ք.մ /27 %/       |
| ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ -----                                     | 36400ք.մ /44%/        |
| ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ, ՍԱԼՎԱԾՔՆԵՐԻ,<br>ԲԱՑ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՄԱԿԵՐԵՍ----- | 16950ք.մ /20.7%/      |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԻՆ. ՄԱԿԵՐԵՍ  |                       |
| -ՎԵՐԳԵՏՆՅԱ ՄԱՍ -----  | 261600ք.մ             |
| -ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԱՍ -----   | 60500ք.մ              |
| ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ -----                                       | մոտ 2400 հատ          |
| ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՔԱՆԱԿԸ -----                                   | մոտ1900 հատ           |

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարտիրոսյան փողոց հ. 1 և հ.1/2 հասցեում բազմաբնակարան համալիրի կառուցման համար, որի նախաձեռնողը հանդիսանում է «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ-ն:

Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը մշակվել են Երևանի քաղաքապետի կողմից 03.06.2022թ-ին տրված N 01/18-07/2084-Ա նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականներով՝ «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ-ին պատկանող հողամասի սահմաններում:

Բազմաբնակարան համալիրի նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել.

1. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականները,
2. N 01/18-07/2084-Ա նախագծման թույլտվությունը՝ տրված 03.06.2022թ-ին,
3. ՀՀ ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
4. Էսքիզային նախագիծը:

Նախատեսվող տվյալ գործունեության իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 2023թ-ի մայիս ամսին խմբագրված տարբերակի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարտիրոսյան փողոց հ. 1 և հ.1/2 հասցեում բազմաբնակարան համալիրի կառուցման նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության պատրաստում:

## **2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունը իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան:

ՇՄԱԳ հաշվետվությունում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները:

## **3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, իրավական այլ ակտերից և կառավարության մի շարք որոշումներից:

ՀՀ Սահմանադրության (2015) 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման վերաբերյալ՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:



Ստորև ներկայացված են շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ.

➤ **ՀՀ օրենքներ**

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի» պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999)
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ( 1994թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը:
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:
- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման կամ վնասազերծման կամ պահպանման կամ փոխադրման և

տեղադրման գործունեության լիցենզավորման պայմաններին և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:

- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

▪ **«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք (2005)**

- «ՀՀ անտառային օրենսգիրք» (2005)
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)
- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

➤ **ՀՀ կառավարության որոշումներ**

- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության 25.09.2014թ. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ

պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա, կառավարության 10.12.2015թ. նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 և կառավարության 27.05.2015 նիստի «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄԼ <http://www.env.am/> ինտերնետային էջում).

➤ **Միջազգային համաձայնագրեր.**

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառվումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ

ՇՆ 10-01-2014 “Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին” N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակը (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

### 4.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր

#### 4.1.1. Ճարտարապետական լուծումներ և տեխնիկական ցուցանիշներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Աջափնյա վարչական շրջանի Մարտիրոսյան փողոց h1 և h 1/2 հասցեում:

Հողամասի մակերեսը կազմում 8. 032828 քմ+ 0.2004 քմ՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների, որոնք բերված են Հավելված 1-ում: Սույն գործունեությամբ նախատեսվում է կառուցել բազմաբնակարան համալիր՝ բաղկացած վերագետնյա և ստորգետնյա հատվածներից:

Վերջինիս համաձայն ստորև ներկայացվում են տարածքի հետ կապված որոշ տվյալներ, մասնավորապես.

- հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեության համար առկա է Երևանի քաղաքապետի կողմից 03.06.2022թ-ին տրված N 01/18-07/2084-Ա նախագծման թույլտվության ((ճարտարապետահատակագծային առաջադրանք) բերված է Հավելված 2-ում):

Նախատեսվող գործունեության տարածքը տրանսպորտային մոտեցմամբ հարում է Մարտիրոսյան փողոցին: Տարածքի իրադրության սխեման տրված է գլխավոր հատակգծի սխեմատիկ նկարագրությամբ և ներկայացված է Հավելված 4-ում:

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի և ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների համաձայն:

Նախատեսվող գործունեության նախագծով նախատեսված բնակելի և հասարակական տարածքների և ավտոկայանատեղերի սխեման բերված է Հավելված 5-ում:

Տարածքում նախատեսված է բազմաբնակարան բնակելիների երեք խումբ, որոնք նախատեսված է կառուցել երեք հերթով: Ամբողջ տարածքը համահարթեցված է և չորս կողմից սահմանափակված է գոյություն ունեցող բետոնե ցանկապատերով: Հատկացված տարածքին կից կան սեփական տներ ու կիսաքանդ շինություններ, որոնք ունեն իրենց ցանկապատերը: Տարածքը երկու կողմերից ունի մոտեցում Մարտիրոսյան փողոցը և մյուսը՝ գրունտային փաղաքը:

Բնակելի բազմաբնակարան մասնաշենքերն ունեն տարբեր հարկայնություններ՝ 7-16 հարկ: Մասնաշենքերը 0.00 նիշից ներքև ունեն երեք հարկ փակ ավտոկայանատեղի, մեկ հարկ հասարակական տարածք և 6-15 հարկ բնակելի:

Ռելիեֆի բավականին թեք է՝ 22.0 մ 247.0մ երկարության մեջ: Այս երկարության մեջ մասնաշենքերի հիմնատակերը նախատեսված է երեք հարթությունների վրա՝ 991.10, 987.50, 984.50 և 0.00=1001.90: Մասնաշենքեր ի ստորգետնյա հարկերում

գտնվող ավտոկայանատեղիներում տարբեր հարթությունների վրա նախատեսված են մուտքեր: Կառուցապատվող ստորգետնյա հարկերը կահավորված են լինելու անհրաժեշտ այնպիսի ենթակառուցվածքով և ինժեներատեխնիկական պայմաններով, որ անհրաժեշտության դեպքում դրանք հանարվոր լինի օգտագործել որպես ապաստարաններ: Յուրաքնչյուր մասնաշենք իրարից առանձնացված են կարելով և ունեն տարբեր հարկայնություն:

Նախատեսվող գործունեության էսքիզային ընդհանուր համայնապատկերը բերված է ստորև՝ նկ.1-ում:



**Նկար 1:** Նախատեսվող բնակելի համալիրի ընդհանուր համայնապատկերը

Բոլոր ցուցանիշները ներկայացված են համաձայն նախագծային լուծումների: Դրանք կարող են կրել ոչ էական փոփոխություններ՝ կախված վերջնական, մանրամասը աշխատանքային նախագծի լուծումներից:

#### **4.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում**

Ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծն իրականացվել է պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, ճարտարապետաշինարարական գծագրերի և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների՝ СНиП 2.04.01-85 համաձայն, որում հաշվի են առնվել նաև շահագործման ընթացքում հրդեհանվտանգության պայմանները:

Ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքները կազմակերպվում են համաձայն վերոհիշյալ նորմերով մշակված ՋՋ նախագծի, որի համար հիմք են հանդիսացել նաև

- ճարտարապետա-շինարարական գծագրերը և գլխավոր հատակագիծը,
- տեղանքի տոպոգրաֆիական հանույթը,
- տարածքի ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները:

Ջրամատակարարումն իրականացվում է նախագծվող ներտարածքային ցանցից:

Լերքին տաք և սառը ջրամատակարարման ցանցերը մոնտաժվում են պոլիպրոպիլենե խողովակներից՝ Ø 63, 50, 40, 32, 25, 20 մմ:

Տանցում ճնշումն ապահովելու համար նախագծով նախատեսվում է տեղադրել պոմպեր՝ մեմբրանային բակով:

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս հեռացվում են նախագծվող ներտարածքային ցանցի մեջ:

Լերքին ցանցերը անցկացվում են պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակներից՝ Ø 110, 75, 50 մմ:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար:

- Շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման, ինչպես նաև անձնակազմի կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջուրը կվերցվի Վեոլիա ջուր ՓԲ ընկերության կողմից շահագործվող ջրատարից՝ համաձայն Վեոլիա ջուր ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանի, որը ներկայացված է լրամշակված ՇՄԱԳ հաշվետվության Հավելված 3-ի 3.1 բաժնում:

#### **4.1.3. Գազամատակարարում**

Բնակելի թաղամասի գազամատակարարումը կիրականացվի համաձայն <<Տրանսգազ>> ՍՊ ընկերության կողմից 15.12.2022թ-ին տրված թիվ 281 տեխնիկական պայմանի, որը ներկայացված է սույն ՇՄԱԳ հաշվետվության 3-րդ հավելվածի 3.3 բաժնում:

#### **4.1.4. Ջեռուցում և օդափոխություն**

Շինությունների բնակելի և հասարակական մասերում ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական եղանակով: Կենտրոնացված ջեռուցում, հետևաբար նաև կաթսայատուն չի նախատեսվում, ինչը նշանակում է, որ այս փուլում ջեռուցման սարքավորումների հստակ տեխնիկական պարամետրերի նկարագրություն ներկայացնելն անհնար է, քանի որ դրանք ընտրվելու են բնակիչների և հասարակական տարածքների շահագործողների կողմից՝ անհատապես:

Շինությունների բնակելի մասում նախատեսվում է միջանցքներում իրականացնել թարմ օդի մատակարարման և ծխահեռացման համակարգեր, իսկ բնակարաններում օդափոխությունը կազմակերպվում է բնական եղանակով:

Ծխահեռացման սարքերը տեղադրվում են տանիքում՝ որպեսզի ապահովեն նոսրացման արտաձման ամբողջ երկարության համար:

Օդի արտաձումը ավտոկայանատեղերից կատարվում է հավասարաչափ ամբողջ ծավալի համար մայթեզրի քարի մակերեսից 200 մմ բարձր և առաստաղի տակից : Յուրաքանչյուր զույգ մեքենայի տեղադրվում է մեկ օդահեռացման գիծ: Արտաձման հորանի խտությունը II դասի է : Հակահրդեհային ծխահեռացումը կատարվում է միջանցքներից և պարկինգից 1.2 մմ հաստության ծածկի սև պողպատե , B կարգի օդատարերի միջոցով: Օդատարերի ուղղահայաց մասերը ամրացվում են 4մ. միջակայքով, հորիզոնական մասերը՝ 5,5մ: Օդի շարժման արագությունը կանգնակներում ընդունվում է ոչ պակաս քան 10 մ/վրկ: Հակաձխային պաշտպանության համակարգերի կառավարումը իրականացվում է ավտոմատ կերպով, հարկերում և միջանցքներում տեղադրված հակահրդեհային ազդանշանային սարքերից հեռակառավարմամբ օպտիկա էլեկտրոնային ծխահրդեհային ազդանշանային սարքերից նորմալ փակող փականների միջոցով: Վերջիններս ձայնային, լույսային ազդանշաններով, այնպես էլ ձեռքի ազդանշանային սարքերով ահազանգում են հրդեհի մասին: Հրդեհի դեպքում ծխահրդեհային ազդանշանային սարքերից՝ տրող իմպուլսի միջոցով միանում է ծխահեռացման տանիքային օդամղիչը միաժամանակ բացվում են տվյալ տեղամների կրակապաշտպան փականները, փակվում են արտաձման համակարգի փականները, միանում է ներաձման և դիմահարային օդամղիչները: Ձմեռային սեզոնին օդի ջերմաստիճանը բարձրացնելու նպատակով տեղադրվում է կալորիֆեր: Արտաձման համակարգին տեղադրվում է կենրոնախույզ օդամղիչ: Ծխահեռացման համակարգին տեղադրվում է ծխահեռացման տանիքային օդամղիչ: Վերելակի հորան տեղադրվում է պատվարային օդամղիչ՝ Ծխահեռացման կանգնակին տեղադրվում է ծխահեռացման կրակապաշտպան փական:

Սանհանգույցների օդափոխությունը կատարվում է 110 մմ տրմագծի 1մմ հաստության ցինկապատ թիթեղից պատրաստված կլոր կտրվածքով խողովակների միջոցով: Բազմահարկ մասնաշենքերի սանհանգույցների և խոհանոցների օդափոխությունը կատարվում է հորան-արբանյակ համակարգով, ջեռուցման սալիկներից յուրաքանչյուր բնակարանից արտախունը իրականացվում է անհատական: Տանիքում բոլոր օդատար հորների վրա տեղադրվում է 1,2 մմ հաստությամբ ցինկապատ ծածկաթիթեղ:

Հորիզոնական խողովակագծերը իրականացվում են են 0,001-0,002մ թեքությամբ դեպի գլխավոր կանգնակ:

Սանհանգույցների և խոհանոցների օդափոխությունը կատարվում է ծածկի ցինկապատ թիթեղից հավաքակցված օդատարերի միջոցով:

Խողովակները մեկուսացվում են ձայնա-ջերմամեկուսացման նպատակով:



Օդափոխության ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Լերաձվող օդը տաքացվում է ջրային օդատաքացուցիչի միջոցով:

Լերաձումը և արտաձումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Բնակելի հարկերի համարների խոհանոցներից օդափոխությունը նախատեսված է բնական՝ հորանների միջով Ø160մմ օդատարերով, բարձրանալով տանիքից վեր 1,0 մ, իսկ ս/հանգույցներից և լոգարաններից՝ կենցաղային օդամղիչով Ø125մմ օդատարերով, բարձրանալով տանիքից վեր 1,0 մ:

Նախատեսված է տեղական արտաձում գազօջախներից:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Հասարակական հարկի օդափոխության ներածման համակարգի օդատարերը ջերմամեկուսացվում են:

Շենքի բնակելի մասից իրականացվում է ծխահեռացում ԾՀ1 համակարգով, որի օդամուղը տեղադրվում է տանիքում: Ծխահեռացման օդատարները մեկուսացվում են հրակայուն մեկուսիչներով (ՄԵՕՔ): Օդի փոխատուցումն իրականացվում է հարկերի դեպի պատշգամբ գնացող դռներից:

Դիմհարման համակարգ նախատեսված է վերելակների հորաններում և աստիճանավանդակում՝ ՕԴ1 համակարգ:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակառավարման վահանակից:

Օդափոխիչ սարքերի աղմուկից խուսափելու համար կկիրառվի ձայնամեկուսիչ խողովակներ , թրթռումների նվազեցման հենարաններ, անհրաժեշտության դեպքում կկիրառվի նաև Անջատվող կամ փոփոխական արագության շարժիչներ (VFD):

Օգտագործված շինարարական նորմավորման գրականություն՝

ՀՀՇՆ IV-12.02.01-04 «ՋԵՌՈՒՅՈՒՄ, ՕԴԱՓՈԽՈՒՄ ԵՎ ՕԴԻ ԼԱՎՈՐԱԿՈՒՄ»

ՀՀՇՆ 11.7.01.96 ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀՇՆ 31-03-2018 «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ՇՈՒՄ 2.08.02-89

ՇՈՒՄ 2.04.05-91

ՇՈՒՄ 11-35-76

#### **4.1.5. Էլեկտրամատակարարում**

Բնակելի թաղամասի էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն <<ՀԷՑ>> ՓԲ ընկերության կողմից ակնկալվող էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի, որի ստացման գործընթացը մեկնարկվել է և ընթացքում է:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության լուծումները՝ շենքի արտաքին պատերը երեսապատում՝ ալյուկաբոնդ, պահպանելով հրակայուն և անջրաթափանց, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերի նորմերը:

Էներգախնայողության բարձրացման նպատակով սենքերում լուսավորության ցանցն իրականացվելու է առանձին խմբերով, իսկ աստիճանավանդակներում և ստորգետնյա ավտոկայանատեղիներում նախատեսվում են շարժման տվիչներ: Ներքին էլեկտրամատակարարման ցանցի իրականացման համար նախատեսվում են վարդակային ցանցեր աշխատանքային և կենցաղային սարքերի սնուցման համար: Առանձին խմբով սնուցումներ նախատեսվում են ՀԻՀԱՀ, ՏՀՁՀ և ԻՑ սնուցման համար: Ներքին էլեկտրամատակարարման և լուսավորության ցանցերն իրականացնվում են եռաջիղ հաղորդալարերով/մալուխներով՝ երրորդ ջիղն օգտագործելով հողանցման համար: Լարանցումն իրականացնվելու է փակ, կախովի առաստաղների հատվածում՝ ծալքախողովակների մեջ: ՆԷԼ ցանցերի սնուցման համար հարկերում նախատեսվում են հարկային լուսավորության վահաններ՝ նվազագույնը մեկ հատ յուրաքանչյուր հարկում:

#### **4.2 Շինարարության կազմակերպում**

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Ընդհանուր շինարարական աշխատանքների ավարտի ժամանակացվույցը՝

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ համապատասխան շինարարական մեքենաների ու մեխանիզմների կիրառմամբ:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում, շին. հրապարակի տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- ըստ անհրաժեշտության՝ կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Հողային աշխատանքներից առաջացած հանույթի և գրունտի հիմնական մասը նախատեսվում է օգտագործել ետլիցքի և համահարթեցում իրականացնելու նպատակով: Շինարարական աղբը, որի ընդհանուր քանակը կհաշվարկվի մանրամասը աշխատանքային նախագծի մշակման շրջանակներում, կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացվելիք վայր:

Լիցքային աշխատանքների ժամանակ լիցքի մեկ շերտում անթույլատրելի է տարատեսակ գրունտների օգտագործումը: Լիցքային գրունտի յուրաքանչյուր շերտ պետք է լցնել հողային պաստառի ողջ լայնությամբ՝ եզրից դեպի կենտրոն:

Շինարարական հրապարակը, ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես համալիրի վարչական տարածքի սահմաններում:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանազատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Ելնելով շինարարության ոչ մեծ տևողությունից հատուկ շինարարական բազայի ստեղծումը նպատակահարմար չէ: Շին. հրապարակում առաջարկվում է նախատեսել կոնտեյների տիպի հատուկ շինություններ՝ աշխույժ գրասենյակ, հանդերձարան, ինչպես նաև պահեստներ, բիզնես-կենտրոններ, աղբի տարրաներ և այլն: Բիզնես-կենտրոններից ջրահեռացում չի նախատեսվում. կիրառվելու են համապատասխան կենսաբանական չեզոքացուցիչներ, իսկ առաջացող կոմպոստը կտեղափոխվի մասնագիտացված սպասարկող ընկերության կողմից, որը կընտրվի նախքան շինարարության մեկնարկը:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել Երևան քաղաքի և նրա հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

#### **4. 3 ԻՆՏԵՆՆԵՐԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ**

Աշխատանքների բնույթից ելնելով բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ և մասնագիտացված:

Բազմապրոֆիլ բրիգադները տվյալ շինարարությունում անհրաժեշտ է ավարտում շինարարական արտադրանքի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական-որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

Կառուցվող հասարակական նշանակության շենքի շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 1 հերթափոխով (8 ժամ) մասնագիտացված բրիգադներով:

Աշխատուժի անհրաժեշտ քանակը շինարարության համար որոշվում է համապատասխան աշխատանքների ծավալների և շինարարության տևողությանը:

Շինարարության մեջ զբաղված աշխատողների քանակը կազմված է՝

- հիմնական արտադրության վրա աշխատող բանվորներից՝ R հ,

- ոչ հիմնական արտադրության վրա աշխատող բանվորներից՝ R օ,

- ինժեներատեխնիկական անձնակազմից՝ R իտա

- կրտսեր սպասարկող և պահակային անձնակազմից՝ R կսպ:

Հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների քանակը ընդունվում է մեկ հերթափոխում բանվորների առավելագույն քանակի չափով

$$R_{բանվ.} = (1.2-1.3)R_{max} :$$

Ոչ հիմնական արտադրության վրա աշխատողների քանակը  $(0.2-0.5)R_{max}$ :

Ինժեներատեխնիկական անձնակազմը՝ հիմնական և ոչ հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների 11%, իսկ սպասարկող կրտսեր անձնակազմը՝ 3.2%, բացի այս արձակուրդում և հիվանդության պատճառով բացակայողների քանակը կազմում է ողջ աշխատողների գումարի 5-6 %-ը:

Շինարարական հրապարակում աշխատող բանվորների քանակի որոշման դեպքում պետք է հաշվի առնել նաև ոչ հիմնական արտադրությունում՝ տրանսպորտային, սպասարկման և այլ աշխատանքներում զբաղված բանվորների քանակը, որը վերցվում է 20-30% աշխատանքներում զբաղված բանվորների քանակից :

Համաձայն նորմատիվ փաստաթղթերի աշխատողների թիվը ըստ կատեգորիաների ներկայացված է աղյուսակում

| Անվանում                      | Աշխատողների թիվը, մարդ |
|-------------------------------|------------------------|
| Ընդհանուր, ներառյալ՝          | 86                     |
| - բանվորներ (84,5%)           | 76                     |
| - ԻՏԱ (11%)                   | 5                      |
| - ծառայողներ (3,2%)           | 3                      |
| - ԿՍՊ և անվտանգություն (1,3%) | 2                      |

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կոտեղարկվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Քանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքներ և տարածքի ջրցանի ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից: Կոյուղին միացված է համայնքային կոյուղատարին:

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը և տեխնիկական բնութագրերը բերված են ստորև.

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ և  
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄԸ  | ՄԱԿՆԻՇԸ                 | ՉԱՓՈՒՆ<br>ՄԻԱՎՈՐ | ՔԱՎԱԿԸ |
|-----|--|-------------------------|------------------|--------|
| 1   | Բուլդոզեր  | Б10М.0111-1Е            | հաստ             | 1      |
| 2   | Թրթուրավոր էքսկավատոր 1.65մ <sup>3</sup> շերտի տարողությունը   | Hyundai R 200 LC -9S    | հաստ             | 1      |
| 3   | Թրթուրավոր էքսկավատոր 1.85մ <sup>3</sup> շերտի տարողությունը   | Hyundai R 290 LC -7A    | հաստ             | 2      |
| 4   | Թրթուրավոր էքսկավատոր փխրեցնող   | Hyundai R 380 LC - 9 SH | հաստ             | 2      |
|     | Աշտարակային կտունկ<br>- սլաքի երկարությունը - 56.0 մ<br>- կեռիկի բարձրությունը - 45.00-150.0 մ<br>- բեռնակությունը - 8-1.3տ    | QTZ 80                  | հաստ             | 2      |
| 5   | Թրթուրավոր կտունկ<br>- սլաքի երկարությունը - 15.0-40.0մ<br>- կեռիկի բարձրությունը - 35.80մ<br>- բեռնարարությունը մինչև - 5.0 տ | ДЭК-254                 | հաստ             | 2      |
| 6   | Ավտովերան -28  |                         | հաստ             | 1      |
| 7   | Տեղում բեռոն պատրաստելու սարք  |                         | հաստ             | 2      |
| 8   | Ավտոբեռնախառնիչ  | ABC                     | հաստ             | 2      |
| 9   | Բետոնամուղ պոմպ  | Volvo FM12              | հաստ             | 2      |
| 10  | Կողավոր ավտոմեքենա   |                         | հաստ             | 3      |
| 11  | Ավտոինքնաքափ 25տ   | KMA3                    | հաստ             | 3      |
| 12  | Թրթրան մակերեսային   | ԻՎ-117                  | հաստ             | 3      |
| 13  | Թրթրան խորքային  | U-414                   | հաստ             | 3      |
| 14  | Թրթրան   | ԻՎ-113                  | հաստ             | 3      |
| 15  | Եռակցման ապարատ  | US-2                    | հաստ             | 4      |
| 16  | Հաստակներ հարթեցնող  | UO-179 և UO-155         | հաստ             | 4      |
| 17  | Ձեռքի տոփանիչ  | Ի-157                   | հաստ             | 4      |
| 18  | Հետհար մուրճ   | ՄՊ-5Պ                   | հաստ             | 4      |
| 19  | Էլեկտրամուրճ   | ԻԷ-4207                 | հաստ             | 4      |
| 20  | Կոմպրեսորային կայան  |                         | հաստ             | 4      |
| 21  | Գլղոն  | A-6223A                 | հաստ             | 1      |
| 22  | Կենտրոնախույզ պոմպ   | U-245                   | հաստ             | 1      |
| 23  | Փոխադրիչ ժապավեն   | SU-13                   |                  |        |
| 24  | Չլուծիչ սարք   | UO-179                  | հաստ             | 1      |

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Օգտագործվող հիմնական շինարարական նյութերն են.  
 - սորուն՝ ավազ, խիճ, կոպիճ, բնահող  
 - փոշենման՝ ցեմենտ, գիպս, կիր  
 - խմորանման՝ բետոնախառնուրդ, շաղախ  
 - հեղուկ՝ բենզին, կերոսին, քսուկային նյութեր  
 - մանրհատավոր՝ շենքի արտաքին պարփակող պատեր՝ այլուկաբոնդ, միջնապատեր՝ շար/ թեթև բետոնե բլոկներ /  
 - հատավոր՝ մետաղապլաստե դռներ և պատուհաններ, լամինատե հատակներ, հատակի և պատերի սալիկներ, շենքի արտաքին պարփակող պատեր՝ այլուկաբոնդ տեսակի կաղապարներ /մետաղ, փայտ, նրբատախտակ/  
 - փաթեթոցային՝ տանիքի փաթեթոցային նյութեր , ծալքաթիթեղ  
 - խոշորածավալ՝ վերելակի հորանների բլոկներ, խոշորածավալ բեռնարկղեր  
 Սանիտարատեխնիկական, էլեկտրատեխնիկական, օդափոխության համակարգերի նյութեր:  
 Շինարարության ընթացքում վտանգավոր նյութերի կիրառություն չի նախատեսվում:  
 Շինարարական նյութերի պահեստավորումը կիրականացվի ըստ ՇԿՆ-ի:

## 5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

### 5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևանի հյուսիսարևմտյան հատվածում, Հրազդանի արևմտյան՝ աջ ափին: Ունի 109 600 բնակիչ: Տարածքը՝ 2582 հեկտար: Սահմանակցում է արևելքից Արաբկիրի, հյուսիս-արևելքից՝ Դավթաշենի, հարավ-արևելքից՝ Կենտրոնի և հարավից՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների հետ: Աջափնյակը ընդհանուր սահմաններ ունի նաև Արմավիրի և Արագածոտնի հետ արևմուտքում և հյուսիսիում Կոտայքի հետ:

**Կլիմա:** Ուսումնասիրվող տարածքի բնորոշ է շոգևերային չոր և փոփոխական սանսկան ջերմասիւնը կազմում է 25.8°C, փչին սոփեկան հարսբերական խնամիրոնը 61% (ժ13-ին) է Ձմեռը ցուրտ է և սնուղ՝ հունվրի փչին սանսկան ջերմասիւնը -3.6°C է հարսբերական խնամիրոնը 77% (ժ15-ին): Գրակցում են 2-3 մ վարսարգաբլերն սնուկոյին քամները

Հանմայն ՀՀ ԱՊ-7.01.2011 նորերի ուսումնասիրվող տարածքում գունափ ասեցման սաաբլաոյն խտրոցոնը կազմում է 0.6 մ իսկ ջանւրմախկյին ճշումը 70 կրում է

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Երևան-Արաբկիր օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանների բնութագրի համար հիմք է ընդունվել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը, որում արտացոլված Երևան-Արաբկիր օդերևութաբանական կայանի կլիմայական ցուցանիշները ներկայացված են ստորև աղյուսակներում.

**«Երևան Արարկիր» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի արժեքները**

| Բնակավայրի անվանումը | Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C |         |      |       |       |        |        |         |           |           |          |           | Միջին տարեկան, °C | Բացարձակ նվազագույն, °C | Բացարձակ առավելագույն, °C |
|----------------------|-------------------------------------|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|-------------------|-------------------------|---------------------------|
|                      | Հունվար                             | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |                   |                         |                           |
| 1                    | 2                                   | 3       | 4    | 5     | 6     | 7      | 8      | 9       | 10        | 11        | 12       | 13        | 14                | 15                      | 16                        |
| Երևան «Արարկիր»      | -2.7                                | -0.2    | 5.8  | 11.9  | 16.6  | 21.3   | 24.9   | 24.7    | 20.4      | 13.7      | 6.6      | 0.2       | 11.9              | -20.6                   | 41.9                      |

**Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը**

| Բնակավայրի անվանումը | մ.ա. / մ.ն. | ըստ ամիսների, °C |         |      |       |       |        |        |         |           |           |          |           | Տարեկան |
|----------------------|-------------|------------------|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|---------|
|                      |             | Հունվար          | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |         |
| 1                    | 2           | 3                | 4       | 5    | 6     | 7     | 8      | 9      | 10      | 11        | 12        | 13       | 14        | 15      |
| Երևան «Արարկիր»      | մ.ա.        | 1.0              | 4.3     | 11.1 | 17.9  | 23.1  | 28.5   | 32.4   | 32.1    | 27.5      | 19.9      | 11.5     | 3.7       | 17.7    |
|                      | մ.ն.        | -5.4             | -3.3    | 1.8  | 7.3   | 11.4  | 15.4   | 19.1   | 18.8    | 14.4      | 8.9       | 3.0      | -2.3      | 7.4     |

Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

| Բնակավայրի անվանումը | ա/ն | ըստ ամիսների, °C |         |       |       |       |        |        |         |           |           |          |           | Տարեկան |
|----------------------|-----|------------------|---------|-------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|---------|
|                      |     | Հունվար          | Փետրվար | Մարտ  | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |         |
| 1                    | 2   | 3                | 4       | 5     | 6     | 7     | 8      | 9      | 10      | 11        | 12        | 13       | 14        | 15      |
| Երևան «Արաբկիր»      | ա   | 17.2             | 18.6    | 25.3  | 33.0  | 34.1  | 38.4   | 41.0   | 41.9    | 38.0      | 30.5      | 23.5     | 21.4      | 41.9    |
|                      | ն   | -20.6            | -19.0   | -16.4 | -8.3  | 1.0   | 2.1    | 7.3    | 8.6     | 2.6       | -3.9      | -9.8     | -20.0     | -20.6   |

Օդի հարաբերական խոնավություն,

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % |         |      |       |       |        |        |         |           |           |          |           |               |               |   |               |   |  |
|----------------------|----------------------------------|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|---------------|---------------|---|---------------|---|--|
|                      | ըստ ամիսների                     |         |      |       |       |        |        |         |           |           |          |           |               | Միջին տարեկան | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % |               | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % |  |
|                      | Հունվար                          | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Միջին ամսական |               | Միջին ամսական, ժամը 15-ին                         | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին                       |  |
| 1                    | 2                                | 3       | 4    | 5     | 6     | 7      | 8      | 9       | 10        | 11        | 12       | 13        | 14            | 15            | 16  | 17            | 18  |  |



|                 |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|-----------------|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| Երևան «Արաբկիր» | 77 | 70 | 60 | 57 | 57 | 52 | 50 | 50 | 51 | 60 | 68 | 77 | 61 | 77 | 68 | 50 | 37 |
|-----------------|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|

**Մթնոլորտային տեղումներ,**

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն մմ |         |      |       |       |        |        |         |           |           |          |           |         | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ |
|----------------------|--|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|---------|---|---|
|                      | ըստ ամիսների   |         |      |       |       |        |        |         |           |           |          |           |         |   |   |
|                      | Հունվար  | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Տարեկան |   |   |
| 1                    | 2  | 3       | 4    | 5     | 6     | 7      | 8      | 9       | 10        | 11        | 12       | 13        | 14      | 15  | 16  |
| Երևան «Արաբկիր»      | 28   | 31      | 38   | 52    | 54    | 27     | 18     | 8       | 13        | 29        | 29       | 27        | 354     | 153   | 201   |
|                      | 25   | 28      | 44   | 34    | 47    | 47     | 34     | 22      | 47        | 34        | 48       | 26        | 48      |   |   |

**Քամի**

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիությունը, %      |                  |          |                |           |                |          | Անդրորրի կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|----------------------|---------|-------------------------|------------------|----------|----------------|-----------|----------------|----------|-----------------------------|---------------------------------|---|--|--|---|
|                      |         | Միջին արագությունը, մ/վ |                  |          |                |           |                |          |                             |                                 |   |  |  |   |
|                      |         | Հյուսիսային             | Հյուսիս-արևելյան | Արևելյան | Հարավ-արևելյան | Հարավային | Հարավ-արևմտյան | Արևմտյան |                             |                                 |   |  |  |   |
|                      |         |                         |                  |          |                |           |                |          |                             |                                 |   |  |  |   |

| 1                  | 2         | 3   | 4   | 5   | 6   | 7   | 8   | 9   | 10  | 11 | 12  | 13    | 14  | 15    | 16  |
|--------------------|-----------|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|----|-----|-------|-----|-------|-----|
| Երևան<br>«Արաբկիր» | հունվար   | 13  | 29  | 8   | 7   | 14  | 20  | 6   | 3   | 45 | 0.9 | ՀվԱրմ | 1.7 | ՀսԱրլ | 1.9 |
|                    |           | 1.9 | 1.9 | 1.6 | 1.7 | 1.8 | 1.5 | 1.8 | 1.9 |    |     |       |     |       |     |
|                    | ապրիլ     | 15  | 29  | 6   | 8   | 12  | 17  | 9   | 4   | 15 | 2.1 |       |     |       |     |
|                    |           | 3.1 | 2.6 | 2.3 | 2.2 | 2.5 | 2.4 | 2.5 | 2.5 |    |     |       |     |       |     |
|                    | հուլիս    | 28  | 32  | 3   | 3   | 8   | 16  | 7   | 3   | 13 | 3.4 |       |     |       |     |
|                    |           | 6.0 | 4.8 | 1.7 | 1.7 | 1.7 | 1.7 | 2.0 | 2.6 |    |     |       |     |       |     |
|                    | հոկտեմբեր | 17  | 37  | 6   | 5   | 10  | 16  | 6   | 3   | 19 | 1.8 |       |     |       |     |
|                    |           | 3.1 | 3.1 | 3.6 | 3.0 | 1.8 | 2.5 | 2.4 | 1.9 |    |     |       |     |       |     |

### *Տարածքի սեյսմիկ բնութագիրը*

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում՝  $A_{max} = 0.4g$  արագացման առավելագույն մեծությամբ, 9 և ավելի բալ սեյսմիկությամբ:

#### **5.2 Քուսական և կենդանական աշխարհ**

Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է ք. Երևանի Աջափնյակ վարչական շրջանում: Տեղանքը գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում, որտեղ բուսականությունը գրեթե բացակայում է:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

Տարածքը զուրկ է բուսականությունից՝ բացառությամբ տեղ-տեղ ինքնաբերաբար աճող ոչ արժեքավոր բուսականությունից:

Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել Մարտիրոսյան փողոց h1 և h1/2 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում, որը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականների, պատկանում է «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ-ին:

### 5.3 Պատմամշակութային հուշարձաններ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարտիրոսյան փողոցի հ1 և հ1/2 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում, որին հարակից/ազդակիր տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները:

### 5.4 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում

Նախատեսվող գործունեության տարածքը հանդիսանում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցմամբ «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ-ին պատկանող հողատարածքներ (8.032828 հա+0.2004 հա), որի համար առկա է Երևանի քաղաքապետի կողմից 03.06.2022թ-ին տրված N 01/18-07/2084-Ա նախագծման թույլտվության ((ճարտարապետահատակագծային առաջադրանք) բերված է Հավելված 2-ում):

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին տվյալ տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի 36400 մ<sup>2</sup> տարածքում կստեղծվեն կանաչապատ գոտիներ: Կանաչապատման համար նախատեսված են հետյալ ծառերը և թփատեսակները.

- սպիտակ բարդի – 36 հատ
- փոփոզ գիհի - 8 հատ
- սիզամարգ – 36 հատ
- թույա ոսկեգույն – 12 հատ
- թույա գնդաձև – 13 հատ
- ակացիա - 5 հատ
- ծաղկանոց – 90 մ<sup>2</sup>
- գոյություն ունեցող ծիրանենի - 7 հատ
- տեղափոխման ենթակա ծիրանենի - 3 հատ

Կանաչապատման համար կիրառվող թփատեսակներն ու ծառատեսակներն իրենց էկոլոգիական, կենսաբանական և կլիմայական առանձնահատկություններով հարմարված կլինեն նշված տեղանքի բնակլիմայական պայմաններին և լիարժեքորեն կկատարեն իրենց սանիտարահիգիենիկ և գեղագիտական գործառույթները: Կանաչապատման նախագծում նաև հաշվի է առնվել այն հանգամանքը, որ բազմաբնակարան համալիրը նախատեսվում է կառուցել Երևանի քաղաքի հարավային արդյունաբերական գոտում, ուստի ընտրվել են էկոլոգիապես առավել կայուն ծառատեսակներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման 6-րդ և 7-րդ գլխի պահանջներին:

Տարածքի բարեկարգման և կանաչապատման նախագիծը (ներկայացված է Հավելված 7-ում) փորձաքննական գործըթացին զուգահեռ հաստատման կներկայացվի Երևանի քաղաքապետարան:

Ոռոգման ցանցը կիրականացվի պոլիէթիլենային խողովակներով՝ կից ցողացիներով և փականներով, կտեղադրվի միջին հզորության ջրապոմպ, որը լիովին կբավարարի կանաչապատ տարածքի լիարժեք ոռոգման պահանջները:

Շինարարական աշխատանքների ժամանակ հանվող հողաբուսաշերտը նախատեսվում է կուտակել և հետագայում օգտագործել կանաչ տարածքի բարեկարգման աշխատանքների համար:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
  - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
  - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
  - Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
  - Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թերությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թերությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
  - Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:
  - Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայողերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

➤ Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնե մակերևույթի կամ պոլիէթիլենային ծածկի կամ փայտյա/մետաղական տակդիրների վրա

➤ Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

➤ Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

➤ Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Տարածքի և հետազոտվող տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումները՝ բազալտ, անդեզիտաբազալտներ, հրաբխային խարամներ և ավազներ: Վերոհիշյալ առաջացումները ծածկված են Չորրորդականի հասակի բերվածքային առաջացումների շերտախմբով էյուվիալպրոյուվիալ և էյուվիալ ծագման առաջացումներով կավավազներ, խոշորաբեկորային գրունտներ, տեխնածին գրունտներ և այլն:

Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 28.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են վերոհիշյալ բոլոր գրունտները:

Սեյսմա-տեկտոնական տեսակետից տարածքը տեղադրված է վաղ-ալպիական ծալքավորման Երևանի միջլեռնային վերադրված ճկվածքի սահմաններում:

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներաերկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակերը՝


- **Շերտի թիվ-1** լիցքային գրունտ չպատկասանդված, խճա-մանրախճային կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, շինարարական, տեղ-տեղ կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.3-2.3 մետր: Տեխնաձին առաջացումներ
- **Շերտի թիվ-2** կարբոնատային կեղև, խճա-մանրախճային կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, հրաբխային ապարներից և քոեճից, կավավազային և փոշենման ավազի լցանյութով մինչև 30%, փոշենման ավազի նրբաշերտերով, գրունտը ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.2-1.1 մետր: Չորրորդականի հասակի էյլովիալ առաջացումներ
- **Շերտի թիվ-3** խճա-բեկորային գրունտ, հրաբխային ապարներից, կավավազա-ավազային, մասամբ խարամա-ավազային լցանյութով մինչև 30%, տեղ-տեղ կավավազի բներով և ոսպնյակներով, տեղ-տեղ հողմնահարված մանրախճի աստիճանի, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-3.0 մետր: Չորրորդականի հասակի էյլովիա-պրոյլովիալ առաջացումներ
- **Շերտի թիվ-4** բազալտ, անդեզիտա-բազալտ մոխրագույն, մասամբ մեծաբեկորային, երբեմն խայտաբղետ երանգներով, ծակոտկեն և ճեղքավորված, տեղ-տեղ միջբեկորային խարամա-ավազային լցանյութով մինչև 15%, ամուր, արմատական տեղադրմամբ, տարածումը համատարած է, միջին հզորությունը՝ 10.0-14.0 մետր: Չորրորդականի հասակի էյլովիալ առաջացումներ
- **Շերտի թիվ-5** խարամ հրաբխային, խճա-մանրախճային կազմի, մասամբ քայքայված ավազի աստիճանի, կարմրավուն երանգով, խարամացած, շեղաքարացած բազալտների բեկորներով, վերին մասում մասամբ կավավազային նյութի խառնուրդով, միջին խտության, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.7-2.9 մետր: Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ:

### 5.5 Օդային ավազան

Երևան քաղաքում օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՇՄՄՏԿ ՊՈԱԿ) կողմից:

2022-ի նոյեմբերի վերջին Երևան քաղաքում փոշու պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան Կենտրոն վարչական շրջանում գրեթե ամբողջ շաբաթվա ընթացքում, Արաբկիրում՝ նոյեմբերի 26-ին և Նոր Նորքում՝ նոյեմբերի 24-ին: Ազոտի երկօքսիդի պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան Նոր Նորքում՝ նոյեմբերի 24-26-ը, 30-ին,

Արաբկիրում՝ նոյեմբերի 26-ին և 30-ին: Ծծմբի երկօքսիդի պարունակությունը չի գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան(ՍԹԿ):



Նկար 2 Երևանում մթնոլորտային օդի որակը, նոյեմբերի 23-30 (2022թ.)

### 5.6 Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածության մոնիտորինգն իրականացվում է «Հիդրոթերևույթաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի,





ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն՝ անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար:

Ուսումնասիրվող տարածքը պատկանում է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածին , որտեղ հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 13 գետային. 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին

| Գետ      | Դիտակետ   | Միջին ամսական ելքեր. մ <sup>3</sup> /վ |       |     |          |       |     |           |       |     |
|----------|-----------|--|-------|-----|----------|-------|-----|-----------|-------|-----|
|          |           | հոկտեմբեր                              |       |     | նոյեմբեր |       |     | դեկտեմբեր |       |     |
|          |           | փաստացի                                | նորմա | %   | փաստացի  | նորմա | %   | փաստացի   | նորմա | %   |
| Հրազդան  | Հրազդան   | 2.56                                   | 3.33  | 77  | 2.10     | 3.44  | 61  | 2.08      | 3.10  | 67  |
| Հրազդան  | Արզել     | 2.19                                   | 3.73  | 59  | 2.12     | 3.69  | 58  | 2.01      | 3.13  | 64  |
| Հրազդան  | Երևան     | 2.65                                   | 3.32  | 80  | 4.40     | 3.94  | 112 | 5.51      | 5.93  | 93  |
| Մարմարիկ | Հանքավան  | 0.57                                   | 0.48  | 118 | 0.64     | 0.51  | 125 | 0.73      | 0.45  | 162 |
| Մարմարիկ | Աղավնաձոր | 1.65                                   | 1.48  | 111 | 1.28     | 1.50  | 85  | 1.28      | 1.33  | 96  |
| Քասախ    | Վարդենիս  | 0.30                                   | 0.53  | 57  | 0.34     | 0.55  | 63  | 0.34      | 0.50  | 69  |
| Քասախ    | Աշտարակ   | 3.72                                   | 2.75  | 135 | 2.93     | 2.93  | 100 | 2.86      | 2.66  | 107 |

ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակում:

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին և նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային և նստվածքային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, որոնք պատկանում են ծակոտկենսա-դատարկությունների ջրերի տարատեսակներին: Համաձայն առկա ֆոնդային նյութերի տվյալների ստորգետնյա ջրերը տեղադրված են 23.0-25.0 մետր խորությունների վրա: Գրունտային ջրերը տեղամասում փորված հորատանցքերով չեն բացահայտվել:

*Ստորերկրյա քաղցրահամ ջրեր:* Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Հրազդանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում Դաշտավան, Հովտաշատ, Հովտաշեն, և Սիս համայնքների N1526, N1523 N2008, N1535, N1536 դիտակետերում ջրերի ծախսերը ավելացել են 0.01-0.48լ/վ սահմաններում: Մասիսի N1519 դիտակետում նույնպես ավելացում է նկատվել, դեկտեմբեր ամսին ծախսը կազմել է 5.14լ/վ, իսկ Հովտաշենի N2053 դիտակետում ծախսը 0.7 լ/վ-ից ավելանալով հասել է 1.29լ/վ:

Սիս համայնքի N78, Ջրահովիտի N2004 և Հայանիստի N2005 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակի բարձրացումներ 0.04-0.17մ սահմաններում:


Արարատյան դաշտի նախալեռնային գոտու՝ Արագածի N2085, Փարպի N2119 դիտակետերում դիտվել է ջրի մակարդակների նվազում 0.82-1.26մ, իսկ Լեռնամերձի N2088 և Դողսի N2086 հորատանցքերում նկատվել է անշան բարձրացման միտում: Փարպիի N2119 հորատանցքում ջրի մակարդակը բարձրացել է 0.44մ-ով: Աղավնատան N2087 դիտակետում դիտվել է ջրի մակարդակի գրեթե կայուն վիճակ:

Հրազդանի ԶԿՏ-ի Կարբի N1636, Բջնի N246, Սուլակի N1297, N1832 բնաղբյուրներում դիտվել են ծախսի իջեցումներ, ք. Երևանի N970 դիտակետում նկատվել է 0.37լ/վ-ով ծախսի իջեցում, իսկ Ղազարավանի N755 աղբյուրի ջրի ծախսը կայուն է՝ 2.9լ/վ:

Ապարանի N2051 և N2107 դիտակետերում նույնպես դիտվել են ծախսերի իջեցումներ: Նիգավանի N2010, N2011 դիտակետերում մակարդակների իջեցումներ են դիտվել՝ համապատասխանաբար 0.88մ և 0.35մ: Բյուրականի N2108 դիտակետում դիտվել է ծախսի գրեթե կայուն վիճակ՝ իջեցման միտումով, իսկ Բուժականի N2105 դիտակետում ծախսը նվազել 0.16լ/վ-ով և կազմել է 0.8լ/վ:

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 13 դիտակետում: Մասիսի N1519, Հովտաշենի N2053 դիտակետերում հանքայնացումը, իսկ Ջրահովիտի N2007 դիտակետում՝ հանքայնացումն ու սուլֆատ իոնների պարունակությունը գերազանցել են

*ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը*



**համապատասխան ՍԹԿ-ները:**

**5.7 Բնապահպանական ազդեցություններ**

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն

ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պարկտիկայի արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

▪ **Օդի աղտոտում**

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներով: Հորատման, բեռնման և թափոնակույտման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Թույլատրված նորմերի սահմաններում ներկայացված արտանետումների պահումը և հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում (տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 5.1 միջոցառումներ), մասնավորապես փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափեխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվաղողերի վրացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

▪ **Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

➤ խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;

➤ Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:

➤ շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

➤ շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:

- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ և ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՅ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շինհրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը չի գերազանցի սահմանված նորմերը և նույնիսկ միաժամանակ մի քանի շինտեխնիկայի աշխատելու դեպքում կգտնվի թույլատրելի սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով կնախաձեռնվեն վերը նկարագրված լրացուցիչ միջոցառումները, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլղոնը: Միաժամանակ այս երկու շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրներն էլ կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ Laէկվ, կազմում է 85 դԲ: Գլղոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6

ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝  $\leq 200$  կգ/մ<sup>2</sup>: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$L_{աղ} = 23 \lg m \pm 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2$$

$$L_{աղ} = 13 \lg m \pm 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2$$

Որտեղ  $m = Km$  – մակերեսի խտության էկվիվալենտն է,

$m$  – մակերեսի խտությունն է, կգ/մ<sup>2</sup>,

$K$  – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը

$$200 \text{ կգ/մ}^2 \quad K=1,3$$

$$M = 1,3 \times 200 = 260$$

$$L_{աղ} = 13 \lg m \pm 13 = 18,2 \text{ դԲ}$$

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$L_{աուար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը RԱտր ըստ աղուայակ 2՝ կազմում է միջինը 50 դԲ:

$$L_{աուար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

Գլդոնի համար՝

$$L_{աուար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլդոնի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

### Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

| Միջին երկրաչափական թույլատրելի արժեքները X0, Y0 և Z0 հաճախականության օկտավային շերտեր, առանցքներով | Թրթռա արագացում                      |     | Թրթռա արագություն     |    |
|--|--------------------------------------|-----|-----------------------|----|
|  | մ/վրկ <sup>2</sup> .10 <sup>-3</sup> | դԲ  | մ/վ .10 <sup>-3</sup> | դԲ |
|  |                                      |     |                       |    |
| 2  | 10,0                                 | 80  | 0,79                  | 84 |
| 4  | 11,0                                 | 81  | 0,45                  | 79 |
| 8  | 14,0                                 | 83  | 0,28                  | 75 |
| 16   | 28,0                                 | 89  | 0,28                  | 75 |
| 31,5   | 56,0                                 | 95  | 0,28                  | 75 |
| 63   | 110,0                                | 101 | 0,28                  | 75 |

|   |    |    |      |    |
|---|----|----|------|----|
|   | 10 | 80 | 0,28 | 75 |
| Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները  |    |    |      |    |
| Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: |    |    |      |    |
| Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասարահների համար մտցվում է ուղղում -3դԲ:                           |    |    |      |    |

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում այիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

▪ **Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից:

Ընդհանուր ջրապահանջը, ներառյալ նաև ջրցանի համար պահանջվող ջրի ծախսի հաշվարկը ներկայացված է ստորև աղյուսակում.

| Ջրի սպառողները              | Չափման միավորը       | Աշխատանքի ծավալը օրում | Ջրի տեսակարար ծախսը (L) | Պահանջվող ջրակ | Ջրի ծախսը մ <sup>3</sup> /օր խմելու | Ջրի ծախսը մ <sup>3</sup> /օր Ցնտեսական |
|-----------------------------|----------------------|------------------------|-------------------------|----------------|-------------------------------------|--|
| Շինարարական հրապարակի ջրցան | Ջրում մ <sup>2</sup> | 3338                   | 0.004                   | տնտեսական      |                                     | 13.4                                   |
| Անիվների վազում             | Մեքենա/հատ           | 10                     | 0.14                    | տնտեսական      |                                     | 1.4                                    |
| Բակահորդեհային հիդրանտ      | հատ                  | 2                      | 5.0                     | տնտեսական      |                                     | 10                                     |
| Բետոնի ջրում                | Ջրում մ <sup>3</sup> | 20x2                   | 0.0314                  | խմելու         | 1.25                                |  |
| Շին.մեքենաների ջրալցում     | Մեքենա/հատ           | 10                     | 0.17                    | խմելու         | 1.7                                 |  |

|  |                |     |       |        |      |      |
|--|----------------|-----|-------|--------|------|------|
| խմելու ջուր                                    | մարդ           | 33  | 0.025 | խմելու | 0.8  |      |
| Ցնցուղային սարքավորումներ<br>$R_{max}=33$ մարդ | մարդ           | 33  | 0.016 | խմելու | 0.5  |      |
| Շաղախների պատրաստում                           | մ <sup>3</sup> | 2x2 | 0.64  | խմելու | 2.56 |      |
| Ընդամենը                                       |                |     |       |        | 6.81 | 14.8 |

▪ **Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Կառուցապատման աշխատանքների ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Կառուցապատման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինությունների կառուցման ընթացքում, շինարարական և կենցաղային աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի շին. թույլտվությամբ սահմանված վայրի և դրանում ներկայացված պահանջների համաձայն: Թափոնների ծավալային հաշվարկված ցուցանիշները ներկայացված են ստորև.

Շին.թափոնները կհավաքվեն համաձայն ՇԳՀ-ի, համաձայն որի, թափոնների համար նախատեսված 2 աղբաման, չափերը 1.5x2.5x2.5: Դրանք կհեռացվեն համապատասխան թափոնավայր՝ համաձայն ՀՀ-ում գործող նորմերի և ընթացակարգերի: Կենցաղային աղբի տեղափոխման համար պայմանագիր կկնքվի Երևանի քաղաքապետարանի կոմունալ սպասարկում իրականացնող կազմակերպության հետ:

Վերը նշված թափոնները՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն



հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

|    | Անվանումը  | Վտանգավորության դասը | Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի» | Քանակը             |
|----|--|----------------------|---------------------------------|--------------------|
| 1. | Շինարարական աղբ  | IV                   | 9120060101004                   | 850 մ <sup>3</sup> |
| 3. | տարածքում առաջացած կենդանի չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) | IV                   | 9120040001 00 4                 | 300 մ <sup>3</sup> |

Շինաղբի, չաղտոտված հողային զանգվածի տեղափոխման վայրը, ինչպես նաև վերը նշված թափոնների տեղափոխման վայրը կճշտվի Երևանի քաղաքապետարանի հետ՝ շին. թույլտվության փուլում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

▪ **Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի (տես՝ ԲԿՊ, Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ լանջաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են դրական ազդեցություններ հիմնականում կապված.

- տվյալ տարածքի բնակելի և հասարակական պայմանների բարելավմամբ,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործմամբ և պահպանությամբ:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա համալիրի ապագա բնակիչներին իրենց բնակությունն ու ժամանցն անցկացնել առավել բարեկարգ և հաճելի միջավայրում:

Նախագծման լուծումներում մեծ ուշադրություն են դարձված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժն ապահովող և այլ հարմարեցված լուծումներին (թեքահարթակներ, հարմարեցված սանհանգույցներ և այլն): ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության

սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ:

Սակավաշարժ խմբերի համար նախատեսված են բնակչության մնացած խմբերին համահավասար կենսագործունեության պայմաններ, շենքերի շրջակայքում նախատեսված են թեքահարթակներ, ինչպես նաև ներսում նախատեսված են անհրաժեշտ հարմարությունները՝ անարգել տեղաշարժի համար: Բոլոր մասնաշենքերում նախատեսված են նորմատիվային չափերին համապատասխան և անհրաժեշտ գույքով կահավորված սանհանգույցներ:

### **5.8 Նախատեսվող գործունեության վարչական տարածքի սոցիալական նկարագիր**

Խորհրդային տարիներին Հայաստանի տարածքը բաժանված էր 37 շրջանների: Հայաստանի Հանրապետության ներկա վարչատարածքային բաժանումը՝ 10 մարզ և Երևան քաղաքը ձևավորվել է համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքների: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի և Արմավիրի մարզերին: Վարչական շրջանը զբաղեցնում է 2516 հա տարածք: Ներառում է 589 բազմաբնակարան շենք և 6930 բնակելի տուն: 2022թ-ի տվյալներով Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բնակչությունը կազմում է 141.700 բնակիչ:

## **6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է Հավելված 7-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման,

շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կիրականացվեն կանոնավոր մոնիտորինգ՝ համաձայն Հավելված 9-ով ներկայացված մոնիտորինգի պլանի, որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր:

Տեխնիկական վերահսկողությունը պետք է իրականացնի ամենօրյա ռեժիմով, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե ազդակիրների կողմից արձանագրվեն համապատասխան բնույթի գանգատներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ևս ներկայացված են ԲԿՊ-ում:

## **8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարտիրոսյան 1 և 1/2 հասցեներում նախատեսված բազմաբնակարան համալիրի կառուցապատման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող գործունեության բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ:

1-ին փուլի հանրային ծանուցումն ու քննարկումները նախատեսված են 2023թ. հունվարի 23-ին, ժամը 15:00 Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրի դահլիճում, որի արդյունքներով կլրամշակվի սույն բաժինը: Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 7 օր առաջ

հանդիպման վերաբերյալ մամրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2023թ. Հունվարի 12-ի համարում: Հանդիպման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել նաև Երևանի քաղաքետարանի պաշտոնական կայքում):

Հանրային քննարկման տեսաձայնագրությունը կներկայացվի սույն հաշվոտվության հայտին կից:

# ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 28 դեկտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԱԳՐՈՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ԱՄ-Ի «ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԲԲԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Աջափնյակ Ս. Մարտիրոսյան փողոց 1

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ պետ. ունեցվ. հաշվ. և ապապետ. պայմ. 10.01.1997թ. թիվ 419, Երևանի քաղաքապետի որոշումներ 01.09.2007թ. թիվ 411-Ա, Վճարման անդորրագիր 27.12.2021թ. թիվ 000062

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-001-0358-0096

Մակերեսի չափը (հա)՝ 8.032828

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքագտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 28122021-01-0417, գաղտնաբառ՝ YQMEEHG3ILXQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

Էջ 1/2

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ              | Մակերես   | Գրանցված իրավունքի տեսակ |
|-----|----------------------|--------------------|-----------|--------------------------|
| 1   | 01-001-0358-0096-001 | Պահեստ             | 664.7 քմ  | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 2   | 01-001-0358-0096-002 | Ջերմոց             | 4472.8 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 3   | 01-001-0358-0096-003 | Անասնաշենք         | 559.9 քմ  | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 4   | 01-001-0358-0096-004 | Օժանդակ շինություն | 162.2 քմ  | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 5   | 01-001-0358-0096-005 | Անասնաշենք         | 406 քմ    | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 6   | 01-001-0358-0096-006 | Անասնաշենք         | 854.8 քմ  | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 7   | 01-001-0358-0096-007 | Անասնաշենք         | 1057.6 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 8   | 01-001-0358-0096-008 | Պահեստ             | 140 քմ    | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 9   | 01-001-0358-0096-009 | Անասնաշենք         | 866.8 քմ  | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 10  | 01-001-0358-0096-010 | Անասնաշենք         | 1727.4 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 11  | 01-001-0358-0096-012 | Օժանդակ շինություն | 37 քմ     | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 12  | 01-001-0358-0096-013 | Սանհանգույց        | 9 քմ      | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 13  | 01-001-0358-0096-014 | Պահակատուն         | 5.2 քմ    | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
| 14  | 01-001-0358-0096-015 | Խանութ             | 41.9 քմ   | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Առկա են 47.2քմ. ինքնական շինություններ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 28122021-01-0417, գաղտնաբառ՝ YQMEEHG3ILXQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով



Կադաստրի  
կոմիտե



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 24 դեկտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

«ԱԳՐՈՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ԱՄ-Ի «ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԲԲԸ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Երևան, Աջափնյակ Ս. Մարտիրոսյան փողոց 1/2

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՄԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Սեփականաշնորհման պայմանագիր 10.01.1997թ թիվ 419, Երևանի քաղաքապետի որոշում 01.03.2007թ թիվ 411-Ա, 16.06.2008թ թիվ 2718-Ա, ՀՀ օրենք 04.10.2005թ թիվ 199-Ն, Հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիր 21.12.2021թ թիվ 000098

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 01-001-0358-0097  
Մակերեսի չափը (հա)՝ 0.2004  
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի  
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների  
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 24122021-01-0459, գաղտնաբառ՝ DGVZAJIHBXIQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ                      | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|-----|----------------------|----------------------------|---------|--------------------------|
| 1   | 01-001-0358-0097-001 | Գյուղատնտեսական շինություն | 672 քմ  | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ           |
|     |                      |                            |         |                          |
|     |                      |                            |         |                          |
|     |                      |                            |         |                          |
|     |                      |                            |         |                          |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Առկա է 50.8քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ շինություններ: 672քմ շինության արտաքին մակերեսը կազմում է 695.7քմ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՀԱՅԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 24122021-01-0459, գաղտնաբառ՝ DGVZAJIHBXIQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

Էջ 2/2



Կադաստրի  
կոմիտե



# ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ



Ձև N1-2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳԾԱՆ ԹՈՒԹՆՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 09/18-079 2024-14

03.06 2022թ.

|  |  |
|--|--|
| Օրբնկալ  | Քաղաքնապետարանի բնակելի համայնքի կառուցման (բարձր դիմացկունության օրբնկալ, IV կարգի) (պայմանագրով, կառուցող, շինարարական, շինարարական, շինարարական միջնակարգ, երկրորդ կարգի, երրորդ կարգի, չորրորդ կարգի, հինգերորդ կարգի) «Աշխարհաբնակի նախագիծ» կամ «Երկու փուլով» «Աշխարհաբնակի նախագիծ» և «Աշխարհաբնակի փաստաթղթեր» նախագծային փաստաթղթերի մշակման համար   |
| Գտնվելու վայրը   | Արարիկյան վարչական շրջան, Մարտիրոսյան փողոց հ.1 և հ.1/2  |
| Կառուցապատող   | «ԱԳՐՈՒՊԱՆԱԿՈՒՄ» ԱՄԻ «ՇԱՀՈՒՅԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄՈՎԱՊՈՒՄ» ԲԲԸ (պ. Երևան, Հաղտոման 1 փող. 46)  |
| Առաջադրանքի տրամադրման հիմքը   | Կառուցապատողի հայրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների անդրադրման գրանցման հ. 28122021-01-0417 և 24122021-01-0459 վկայականները, երևանի քաղաքապետի <u>03.06.2022</u> թ. հ. <u>2024-14</u> որոշումը, երևանի քաղաքապետի կից քաղաքաշինական խորհրդի 26.03.2021թ. հ.2 նիստի արձանագրությունը, Հայրենիքի նախագիծը:  |
| Ճարտագրական կառուցող ՀՀ Երևանի քաղաքապետարանի կողմից ստանալով համապատասխան փաստաթղթեր<br><b>Ն Ա Մ Ա Գ Ց Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր</b><br>(ստանդարտ) (*) կախ ընդհանուր գրանցման կառուցողական արձանագրում է կնք կնքագրվող անձինքից (V 1:500)<br>ՀՀ կառավարության 29.12.2011թ N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխվում են համապատասխանաբար բնակավայրերի և բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 01-001-0358-0096, 01-001-0358-0097 |  |
| 1. Հողամասը գտնվում է  | Երևանի վրաց քաղաքաշինական շրջանում, Երևանի քաղաքապետարանի կողմից ստանալով համապատասխան փաստաթղթեր  |
| 2. (*) Հողամասի չափերը   | 8.032828 - 0.2004 հա   |
| 3. Հողամասի անվան վիճակը   | Ռեզիդենցիայի թեմայի թանգարանի շինարարական շինություններով ժամանակավորապես հողամասը:  |
| 4. (*) Տրանսպորտային պայմանները  | Մարտիրոսյան փողոց:   |
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ   | Կից գործող ինժեներական ցանցեր և հաղորդակցություններ:   |
| 6. (*) Կից հողամասեր   | Բնակելի տներ և կառուցապատման ազատ հողամասեր:   |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանված զոտիներ)  | ---  |
| 8. (*) Հատկազգային սահմանափակումներ  | ---  |
| 9. Ճարտարապետահատկազգային պահանջներ  | Մշակույթի նախարարության կողմից ստանալով համապատասխան փաստաթղթեր<br><b>Ն Ա Մ Ա Գ Ց Վ Ա Ն Ի Պ Ա Հ Ա Ն Զ Ն Ե Ր</b><br>(ստանդարտ) (*) կախ ընդհանուր գրանցման կառուցողական արձանագրում է կնք կնքագրվող անձինքից (V 1:500)<br>Մշակույթի նախարարության կողմից ստանալով համապատասխան փաստաթղթեր<br>ՀՀ կառավարության 29.12.2011թ N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխվում են համապատասխանաբար բնակավայրերի և բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 01-001-0358-0096, 01-001-0358-0097 |
| 9.1. (*) օրբնկալի հեռավորությունը կարմիր գծից (մետր)   | ---  |
| 9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտրոններից (օրբնկալներից) (մետր)   | Հարակից հողամասերից, շենքերից, շինություններից և միջանցից մասնաշենքերի հեռավորությունը նախագիծը գործող նորմատիվային պահանջների համաձայն:   |
| 9.3. թույլատրյալ բարձրությունը (մետր)  | Համայնքի նախագիծը տրամադրում է հողակտրոնի երեք շենքային խմբերով:<br>1-ին խումբ՝ 7-րդ մինչև 16 վերգետնյա հարկերով:<br>2-րդ և 3-րդ խումբ՝ 7-րդ մինչև 19 վերգետնյա հարկերով:<br>Բնակելի հարկերի բարձրությունը հարկից հարկ ընդունել մինչև 3,60մ:<br>Հարակից են մասնակի ալեկի բարձր ծավալներ տրամադրվող սպասարկող սարքանավանդակների, վերջնական իրականացման, տեխնիկական սենյակների և դեկորատիվ տարրերի համար:<br>Ռեզիդենցիայի առանձնահատկություններից ենթելով հնարավոր են նկատվում և որմնախարսխային հարկեր:  |
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը  | ---  |
| 9.5. կառուցապատման տոկոսը  | Վերգետնյա ծավալների համար՝ մինչև 40%<br>Արդրգետնյա՝ մինչև 70%  |
| 9.6. կանաչապատման տոկոսը   | Շենքերը սպասարկող ճանապարհների ու սպվածքների համար մինչև 20%   |
| 9.7. այլ պահանջներ   | 40% և ավելի  |



# ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ


## 3.1. Տեխնիկական պայման՝ Վեոլիա Ջուր



«Ազրոսպասարկում» ԱՄ-ի «Շահումյանի շրջ. միավորում» ԲԲԸ  
տնօրեն Մելանյա Պողոսյանին  
հասցեն՝ ք. Երևան, Մերաստիա 3/3/

«12» փետրվարի 2020թ.  
N 2605

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում



Հարգելի տիկին Պողոսյան,

Ելակատարման Ձեր դիմումի՝ ներկայացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մշակված ջրամիացման, ջրահեռացման, հեղեղատարի միացման և եհ հիդրանտի տեղադրման նախագծման տեխնիկական պայմանը /ԱՄ-1065/: Դրա հիման վրա անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի առնվազն 2 փաթեթ և մյուս կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համաձայնեցնելուց հետո, այն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից հաստատելու և միացման նախահաշիվ ստանալու նպատակով, ներկայացնել ընկերության Շահագործման տնօրինություն՝ հետևյալ հասցեներից որևէ մեկով.

- 1. ք. Երևան, Փափազյան 2-րդ նրբ., Կուկայան ՕԿՁ
- 2. ք. Գյումրի, Դուդկոյի 2

Հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի 1 բնօրինակ փաթեթը պահվելու է ընկերությունում:

Տեղեկացնում եմ նաև, որ նոր համակարգի կառուցման աշխատանքները սկսելուց առաջ հարկավոր է այդ մասին տեղեկացնել 1-85, 011 300185 հեռախոսակետերով:

Հողային աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:

Նոր համակարգի կառուցման տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով հարկավոր է դիմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար լիցենզավորված կազմակերպության, որոնց ցանկը հրապարակված է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում, օգտվել վերջինիս ծառայություններից և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն ներկայացնել կառուցված օբյեկտի վերաբերյալ կից ցանկում նշված փաստաթղթերը ընկերության կողմից միացման աշխատանքներ կատարելու, առևարային հաշվառքի սարք տեղակայելու և Ձեզ հետ կապվող ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելու համար:


Մինևույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ կառուցված նոր համակարգի ստիպականության իրավունքի Հայաստանի Հանրապետության անհատուց հանձնումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առդիր 2 թերթ:  
Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն  
Մ. Շահինյան

Պատասխանատու  
Է. Մարտիրոսյան

77, ք. Երևան, 375025, Արովյան 66ա  
Ֆեռ. 1-85, 0-800-00-185, 011-300-185  
Էլ. փոստ office@vjur.am  
Կեք-եք www.veolia.am



RA, Yerevan, 375025, St Abovyan 66a  
Tel: 1-85, 0-800-00-185, 011-300-185  
E: office@vjur.am  
Web site: www.veolia.am



| Միացման տեսակ և կարգավիճակ     | Ջրագիծ  | Կոլեկտրագիծ                                       | Հեղեղատար  | Հիդրամետրի տեղադրման                          |
|--------------------------------|---|---|--|---|
| Գտնվելու վայր                  | Լուկուշինի ջրամբարից դուրս էկող 4-րդ ջրատարից                                     | Արա Մարգարյան փողոցով անցնող                      |  |   |
| Տրամագիծ, ճնշում, տեսակ        | ճ=1000 մմ P= 1.0մթն. պող  | ճ= 1000 մմ  | Համաձայն ՀՀԸԵ. 40-01.01-2014թ. 167 կետի նամակայն |   |
| Միացման կետ                    | Լուկուշինի ջրամբարից դուրս էկող D1000մմ 4-րդ ջրատարից                             | Արա Մարգարյան փողոցով անցնող Փ=1000մմ/ կոլեկտորին |  |   |
| Միացման տրամագիծ               | <b>Համաձայն մախագծի</b>   |   |  |   |
| Ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը |   |   |  |   |
| Այլ պահանջներ                  | Ջրաչափի ծանր փառայնից զննանույթ, մախտատեսչ «Շրտամե» >> մանրէիցի կամ նմանատիպ պոստ | Կոլեկտրագիծ փառայնի փնտռված փառայնից զննանույթ    |  | Հիդրամետրի միացման փնտռված փառայնից զննանույթ |
| Ջրամատակարարման պրաֆիկ         |   |   |  |   |

Կառուցման աշխատանքները կատարվու համար անհրաժեշտ է պատվիրել մախագծամաշխարհային փաստաթղթերի կազմումը տվյալ որոշում ճնշնկադրված կազմակերպությանը և այն համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական նախագիծը դիմացի նախնադրյալը իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ վերջինիս պաշտոնական կայքում կրապարտված ցանկում ընդգրկված կազմակերպությանը Դիմող անձի հաշվին : Կառուցված ձոր համակարգի միացմանը դրամատակարարման և քրահնարման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Դիմող անձի հաշվին :


Ջրամատակարարման և քրահնարման ծառայություններն մատուցվու են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի նաև Ջրամատակարարման և քրահնարման ծառայություններն մատուցման պայմանագրի կնքմանց նաև :

Սույն տեխնիկական պայմանները ուրի մեջ 66 1 (ճնկ) տարի ժամկետով գրանցման օրվանց պեսած, նախատվ զննումը դրանք ենթակա են վերանայման :


Կառուցված ընթացքում հողային աշխատանքները իրականացնելիս անհրաժեշտ է մեք քիչեկ տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրականա և կամ շահագրվու ժարինների կամ անձանց բուլտվարյաննող համաձայնությունները :

Ամերկայրերի պատգին կոլեկտր շաղակալության զննում անընթացիք նուսցման մեկլին ցանկից բուլտվարների քրեր պետք է նուսցվն շնքի մու մախտատեսչու առկակներով (քաղ բուլտվար) ընդ որում, պետք է մախտատեսչ շնքի մու նուր մակերևույթի սրբորնց բաղատղ միջոցառումնը :

«Արևմուտք» \* ՏՏ տնօրենի տեղակալ՝  **Ա. Երիկյան**

«Շահումյան» տեղամասի պետ՝  **Ա. Միմոնյան**

Տեխ. պայմանների համակարգող՝  **Գ. Կարպետյան**





Երևանի Քաղաքապետարանի  
Աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ  
կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժ/պ՝ Ա. Սեդոյանին

№ 16 գնահատման ընթացք 2019թ.  
N 33344

Առարկան՝ Տեխնիկական պայմանի էլակետային տվյալներ

Հարգելի պարոն Սեդոյան,

Ի պատասխան Ձեր 10.12.2019թ. թիվ 50/1-Ս-9469 գրության՝ հայտնում եմ, որ հ. Աջափնյակ Մարտիրոսյան 1 հասցեի համար ներկայացված դիմումին ընթացք տալու համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից տրամադրված հատակ ջրապահանջի հաշվարկ, ինչից հետո կտրամադրվի էլակետային տվյալներ:

Հարգանքով՝

*Սեդոյան*

Գլխավոր տնօրենի ժ/պ  
Մ. Շահինյան

Պատասխանատու՝ Ա. Մարտիրոսյան

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՎԼԵՈՂԻԱ ՎԵՈՂԱ ՊԵՏԻՍ  
ՆԵՐՑ 33344  
16.12.2019

*[Handwritten signature]*

ԳՂ, ք. Երևան, 375025, Արմյան 66ա  
Քտ. 1-85, 0-800-00-185, 011-300-185  
Էլ. փոստ՝ office@vjur.am  
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 375025, St.Abovyan 66a  
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185  
E-mail: office@vjur.am  
Web site: www.veolia.am





ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ՍՈՑԻԱԼԱԿՈՆՈՄԻԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐԻ ՆԱԽՊԵՐՈՒՄԻ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

ՀՀ ք. Շիրակ - 17 կմ/ժամական քող 127

N ՏՊ-ՃՀԱ-Ս 4/0303

«13» 12 2019թ.

## ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՃՀԱ տրամադրելու համար

Համաձայն ԷՄՕԿ-ի 13.9 կետի պահանջների

Տրվում է՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝

Ա. Սեդոյանին (10.12.2019թ., 50/1-Ս-9469)

Սպառիչի գործունեությունը և հասցեն՝ ք. Երևան, Աջափնյակ, Մարտիրոսյան փ. 1 և 1/2 Պահանջվող հզորությունը՝ 6000 կՎԱ

Սնող ցանցի լարումը՝ 0.4 կՎ


1. Էլ մատակարարումը հնարավոր կլինի իրականացնել կառուցվելուց տրանսֆորմատորային ենթակայանների 0.4 կՎ վառաններից որոնց (կառուցվող ենթակայանների) 6/10 կՎ էլ մտնոնք հնարավոր է իրականացնել «Հասիմյան 1» կամ «Հասիմյան 2» ենթակայանների 6/10 կՎ ՔԱ-ներից:
2. Հիմնական էլ մատակարարման իրականացման համար, կառուցապատող պետը է դիմի «ԷԵՏ» ՓԲԸ ցանկացած տարարկման կետերին (մասնավորապես՝ ք. Երևան, Արսենյական 127) ներկայացնելով ԷՄՕԿ-ի 13.2 կետի պահանջներով նախատեսված փաստաթղթերը՝ էլ ցանցին միացման պատվեր ձևակերպելու համար:
3. Բազմաֆունկցիոնալ համալիրի էլեկտրամատակարարման նպատակով՝ անհրաժեշտ է որպեսզի կառուցապատող կողմից տրամադրվի երկու հատ հողատարածք՝ 12x8=96մ<sup>2</sup> (յուրաքանչյուրը), նոր ենթակայանների կառուցման համար:

Տեխնիկական տնօրեն

Դ. Գրիգորյան

Կատարող Դ. Սահակյան  
ՇՆ. 59-12-68

### 3.3. Տեխնիկական պայման՝ գազամատակարարում

|   |  |
|---|--|
|    | <p style="font-size: 2em;">4</p>   |
| <p>Закрытое акционерное общество<br/>«Газпром Армения»<br/>(ЗАО «Газпром Армения»)</p> <p><b>ЗАМЕСТИТЕЛЬ<br/>ГЕНЕРАЛЬНОГО ДИРЕКТОРА<br/>ГЛАВНЫЙ ИНЖЕНЕР</b></p> <p><small>Тбилисское шоссе, 43, Ереван, Республика Армения, 0091<br/>тел.: (374 10) 294-880, 294-753, факс: (374 10) 294-728<br/>e-mail: info@gazpromarmenia.am, gazpromarmenia.am</small></p>  | <p><b>«Գազպրոմ Արմենիա»<br/>փակ բաժնետիրական ընկերություն<br/>(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)</b></p> <p><b>ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ<br/>ՏԵՂԱԿԱԼ<br/>ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ</b></p> <p><small>0091, ՀՀ, Երևան, Քրիվիայան խմբույի 43<br/>հեռ.՝ (374 10) 294-888, 294-753, ֆաքս՝ (374 10) 294-728<br/>Էլ. փոստ՝ info@gazpromarmenia.am, gazpromarmenia.am</small></p> |
| <hr/>   |  |
| <p>19. 12 2022</p>  | <p>№ 02/17.1/3955-2022</p>   |
| <p>✓ «Ազրոսպասարկում» Ա/Մ-ի<br/>«Շահումյանի Շրջանային Միավորում» ԲԲԸ-ն և/Ա<br/>տիկին Ա. Նավոյանին</p> <p>պատճենը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի<br/>քաղաքաշինական գործունեության հատուկ<br/>կարգավորման ծրագրերի բաժնի պետ<br/>պարոն Ա. Սեդոյանին</p> <p>«Տրանսգազ» ՍՊԸ տնօրեն<br/>պարոն Գ. Մովսիսյանին</p> <p>Երևանի ԳԳՄ տնօրեն<br/>պարոն Վ. Արտաշեսյանին</p>  |  |
| <p>«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն թույլատրում է, պատվիրատուի միջոցներով, կից ներկայացված տեխնիկական պայմաններին և եզրակացությանը համապատասխան, արտոնագիր ունեցող կազմակերպությունների միջոցով կազմել ՀՀ ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Ս. Մարտիրոսյան փողոց թիվ 1 և 1/2 հասցեներում՝ կառուցապատվող տարածքի գազիֆիկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և իրականացնել շինհավաքակցման աշխատանքները՝ «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «Երևանի» ԳԳ մասնաճյուղի հետ համաձայնեցված ու վերահսկողություն իրականացնող իրավասու մարմիններում գրանցված նախագծով:</p> <p>Նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացնել ՀՀ իրավական ակտերով սահմանված նորմերի (այդ թվում՝ շինարարական նորմերի և տեխնիկական կանոնակարգերի) դրույթների պահանջներին համապատասխան, իսկ գազամատակարարումը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005թ. հուլիսի 8-ի N95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով» սահմանված կարգով, ապահովելով «Անվտանգության պահանջները մայրուղային գազատարներում» և</p> |  |

«Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգերի պահանջները:

Միաժամանակ առաջարկում եմ կառուցապատման ոլորտում իրավասու մարմնի լիազորություններով պայմանավորված ճարտարապետահատակագծային առաջադրանքը ձևավորել տեղադիրքային առումով նույն ուղղությամբ տեղաբաշխված կառուցապատողների կողմից նախատեսվող գազիֆիկացման աշխատանքների համակարգմամբ, որի դեպքում քաղաքաշինական և տեխնիկական պահանջների ընդհանուր լուծմամբ կապահովվի գազաբաշխիչ կայանի ընտրությունը և մեկ ուղեգծով գազատարի կառուցումը համաֆինանսավորման սկզբունքով՝ սպառման ծավալների գումարային մեծությանը համապատասխան մեկ ընդհանուր տեխնիկական պայմանների հիման վրա:

Առդիր՝ գազիֆիկացման տեխնիկական պայմանները և եզրակացությունը – 7 թերթ;  
- երևանի ԳԳՄ 15.12.2022թ. թիվ 22-13/4796 գրությունը – 1 թերթ:



Ա. Հակոբյան

Կարտոդղ՝ Ռ.Չ.Վասիլյան  
Հեռ. (010) 29-47-70

**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ**  
**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ**  
**Գլխավոր տնօրենի տեղակալ,**  
**ճարտարագետ**

**Ս.Ռ. Հակոբյան**  
 2022թ. 07.07



**Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**22 ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Ա. Մարտիրոսյան փողոց թիվ 1 և 1/2**  
**հասցեներում՝ կառուցապատվող տարածքի**  
*(օբյեկտի անվանումը և հասցեն)*  
**գազամատակարարումը P=0.3 ՄՊա ճնշման և Q=9500 մ<sup>3</sup>/ժամ նախատեսվող ծախսով**  
**հնարավոր է իրականացնել Երևան-4 ԳԲԿ-ն սնող D=500 կողմնատար - գազատարից.**  
*(գոյություն ունեցող գազատարի կամ ԳԲԿ-ի անվանումը)*


որի տեխնիկական պայմաններն են՝

|  |   |
|--|---|
| 1. Միացման տեղում գազի աշխատանքային ճնշումը                            | P <sub>աշխ. փաստ.</sub> = 1.1 + 1.7 ՄՊա   |
| 2. Գազատարի տրամագիծը ; (մմ)   | 530 × 8 մմ  |
| 3. Գազատարի որևէ հատվածի վերականգնման (վերատեղադրման) անհրաժեշտություն | չկա   |
| 4. Միացման տեղը  | Ըստ նախագծի – Երևան-4 ԳԲԿ-ն սնող D=500 կողմնատար - գազատարի 0,075 կմ-ից:  |
| 5. Օբյեկտի հեռավորությունը գազատարից                                   | Ըստ նախագծային լուծումների և գործող նորմատիվների պահանջների:  |
| 6. Տեղադրվող գազի հաշվիչը  | Ըստ գազասպասման ծախսերի - բարձր ճշտության դասի կահավորված էլեկտրոնային ճշտիչով:   |
| 7. Պայմաններ   | <b>7.1 Գառնուցել՝</b><br>7.1.1 Համապատասխան հզորության գազարաշխիչ կայան (ԳԲԿ)՝ գործարանային արտադրության սարքավորումներով, որի կազմում պետք է լինեն՝<br>ա) փոխմիացման (переклосочения), գազի մաքրման, գազի ճնշման եվագեցման, գազի հաշվառման, գազի հոսավորման և սեփական կարիքների համար գազի առման (отбор) հանգույցներ;<br>բ) էլեկտրասնուցման, կապի, էլեկտրաքիմիական պաշտպանության, պահպանության և հրդեհային ձայնա-ազդանշանային, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր: |


|                               |   |
|-------------------------------|---|
|                               | <p>7.1.2 ԳԲԿ-ն սնող կողմնատար-գազատար (P<sub>տար</sub>=4.0 ՄՊա), փականային հանգույցներում օգտագործելով ստորգետնյա գեղային փականներ:</p> <p>7.1.3 Միջին և ցածր ճնշման գազատարներ, նախատեսվող կամ կառուցվող հասարակական նշանակության շենքի գազիֆիկացման համար:</p> <p>7.2 Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 01.15.2009թ. № 119-Ն; Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 23.12.2020թ. թիվ 121 որոշմամբ ընդունված ԵԱՏՄ ՏԿ 49/2020 տեխնիկական կանոնակարգի; 16.07.2015թ. № 787-Ն որոշումների պահանջներին համապատասխան և համաձայնեցնել շահագրգիռ կազմակերպությունների հետ:</p> |
| <p>8. Լրացուցիչ պայմաններ</p> | <p>8.1 Կառուցապատման ոլորտում իրավասու մարմնի լիազորություններով պայմանավորված ճարտարապետահատակագծային առաջադրանքը ձևավորել տեղադիրքային առումով նույն ուղղությամբ տեղաբաշխված կառուցապատողների կողմից նախատեսվող գազաֆիկացման աշխատանքների համակարգմամբ, որի դեպքում քաղաքաշինական և տեխնիկական պահանջների ընդհանուր լուծմամբ կապահովվի գազաբաշխիչ կայանի ընտրությունը և մեկ ուղեգծով գազատարի կառուցումը համաֆինանսավորման սկզբունքով սպառման ծավալների գումարային մեծությանը համապատասխան մեկ ընդհանուր տեխնիկական պայմանների հիման վրա:</p>   |

Հիմք՝ - «Տրանսգազ» ՍՊԸ 15. 12. 2022 թ. № 01/13.10/2348-2022 գրությունը:  
Տեխնիկական պայմանները 15.12.2022թ. №281:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
ԳՓՀ և ԳՄՊ Շ ու Ս բաժնի պետ

 Վ.Ա. Ասրիյան

Կազմեց՝

 Ռ.Ջ. Վասիլյան



«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
«ՏՐԱՆՍԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՆԽԱՆՍԿՈՒԹՅԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ЗАО «Газпром Армения»  
ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ «ТРАНСГАЗ»

**ՏՆՕՐԵՆ  
ДИРЕКТОР**

2228, ԳԳ, Կոտայքի մարզ, գ. Կ.Պետրոսի, 6-րդ փ., թիվ 1: 2228, РА, Котайкская обл., с. В.Петрос, 6-ая ул., 1.  
Պեռ. / Тел: (+374 10) 29 48 22: ֆաքս / Факс: (+374 10) 29 65 61, 29 48 27:

« 15 » 12 2022

№ 01/13.10/2348-2022

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
Գլխավոր տնօրենի տեղակալ-  
գլխավոր ճարտարագետ  
պարոն Ա.Հակոբյանին

*Հարգելի պարոն Հակոբյան*

Ի կատարումն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 15.12.2022թ. №Ն/53/35640-2022 հանձնարարականի, ներկայացնում եմ ք.Երևան Աջափնյակ վարչական շրջանի Ս. Մարտիրոսյան փողոց թիվ 1 և 1/2 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գազամատակարարման տեխնիկական պայմանները:

Կից – 4 էջ:

*Հարգանքով՝*

 Recoverable Signature

ԳԱՌՆԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Signed by: MOVSISYAN GARNIK 1301620971

Գ. Մովսիսյան

Ա.Քոչարյան  
294-826

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
«ՏՐԱՆՍԳԱԶ» ՍՊԸ  
ՏՐՈՒՆԻ ՏԵՂԱԿԱԼ-  
ԳԼԽԱԿՈՐ ԶԱՐՏԱՐԱԿԵՏ  
Հ ՂԱԶԱՐՅԱՆ



2022թ.

**Գ Ա Ջ Ա Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր Մ Ա Ն**  
**Տ Ե Ն Ի Կ Ա Կ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ն ԵՐ**  
(գազափոխադրման ցանցից)

թիվ. 281

15.12.2022թ.

Պատվիրատու՝ լիազորված անձ՝ Անտիտ Նավոյան  
*(Գազակիրառույցի անվանումը, ֆիզիկական անձի Ա.Ա.Ը)*

Տեխնիկական պայմանների տրամադրման հիմքերը – Պատվիրատուի դիմումը:  
«Գազայրում Արմենիա» ՓԲԸ 15.12.2022թ. №Վ/53/35640-2022  
*(Գիմումի գրանցման № և ամսաթիվը)*

Շինարարության տեղը և հասցեն՝ 22 ք.Երևան Աջափնյակ վարչական շրջան  
Ա. Մարտիրոսյան փողոց թիվ 1 և 1/2:

Բնական գազի սպառման պահանջվող ծավալները 9.5 հազ. մ<sup>3</sup>/ժամ  
*(առավելագույն ժամային ծախսը)*

Գազամատակարարման համար պահանջվող գազի ճնշումը 0.3 (3) ՄՊա (կգուժ/սմ<sup>2</sup>)  
*(գազի առավելագույն ճնշումը)*

Միացման կետում գործող գազատարի (կամ ԳԲԿ-ի) անվանումը Երևան-4 ԳԲԿ-ն սևող  
D<sub>g</sub>-500 մմ տրամագծով կողմնատար-գազատար  
*(Ուղղություն գազատար, կողմնատար-գազատար, ԳԲԿ, այլ կազմակերպություններին պատկանող գազատարներ, ԳԲԿ ենթ)*

Օբյեկտի շինարարության պլանավորված ժամանակահատվածը սկիզբը –            ավարտը –           

Գազափոխադրման ցանցին միանալու տեխնիկական պայմանները՝

Ներմիացման կետ է հանդիսանում Երևան-4 ԳԲԿ-ն սևող D<sub>g</sub>-500 մմ տրամագծով կողմնատար-գազատարի մուտավորապես 0.075կմ:  
*(Ուղղություն տեխնիկական թևաթղթերը)*



Գազի ճնշումները ներմիացման կետում:

- ետխազձային 5.5 (55) ՄՊա (կգուժ/սմ<sup>2</sup>),
- փաստացի 1.1-1.7 (11-17) ՄՊա (կգուժ/սմ<sup>2</sup>)

Ներմիացման կետում խողովակի և մեկուսիչ շերտի տեխնիկական բնութագրերը պողպատե խողովակ D=530x8մմ, մեկուսիչ շերտը՝ ժապավենային

*Ներմիացման տեղանքային գծագրատիկերը*



Տեխնիկական պահանջներ՝

1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել տեխնիկական պայմանների ամբողջական պահանջներով:
2. Տեխնիկական պայմաններից շեղումները համաձայնեցնել «Տրանսգազ» ՍՊԸ-ի հետ:
3. Նախագիծը պետք է համաձայնեցվի շահագործող կազմակերպության հետ:
4. Նախագծի մեջ նախատեսել գազատարի պաշտպանիչ միջոցներ՝ (պասիվ և ակտիվ պաշտպանության) նշելով մեկուսիչ նյութերի տեսակները և օգտագործվող նյութեր-սարքավորումների սերտիֆիկատները:
5. Կատարել գազատարի (ԳԲԿ-ի) կապակցումը տեղանքի հետ:
6. Նախատեսել միայն գործարանային արտադրության ժամանակակից սարքավորումներ:
7. Նախագիծը համաձայնեցնել պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի և անհրաժեշտության դեպքում այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:
8. Նախագծերին տալ էսթետիկական ձևավորում:
9. Նախագծային, շինմոնտաժային և կարգաբերման աշխատանքները պետք է կատարվի համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից:
10. Մինչ շինարարությունը սկսելը նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ենթակա են փորձաքննության:
11. Եինարարության ավարտից հետո ՆՆՓ-ի 2 օրինակ հանձնել շահագործող կազմակերպությանը:
12. Գազատարի պահպանման գոտիները հաշվարկել համաձայն ՀՀ Կառավարության 16 հուլիսի 2015թ. թիվ 787-Ն, իսկ նվազագույն հեռավորությունները՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2020թ. դեկտեմբերի 23-ի №121 որոշումների:
13. Առևտրային հաշվառքի սարքերը (գազահաշվիչները) պետք է համալրված լինեն գազի ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչով:
14. Հաշվառման հանգույցը նախատեսել առավելագույն և նվազագույն ծախսերի հաշվառման պայմանով:
15. Նախագծով նախատեսված սարք-սարքավորումները պետք է ունենան համապատասխանության սերտիֆիկատ և շահագործման տեխնիկական փաստաթղթեր:

Հատուկ պահանջներ՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հիմնական պահանջներ՝

1. Կառուցել համապատասխան հզորության գազաբաշիչ կայան, ԳԲԿ-ն սնող կողմնատար-գազատար և բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը սնող միջին ճնշման գազատար:

2. Գազատարի տեղադրումը նախատեսել ստորգետնյա

*(տեղադրման եզանակը-ստորգետնյա, վերցնելու)*

պողպատե խողովակից, իսկ ավտոմոբիլային, երկաթգծային ճանապարհների և ջրային արգելիքների անցումները նախատեսել ստորգետնյա

*(ստորգետնյա, վերցնելու)*

Արհեստական արգելիքների անցման մեթոդները նախապես համաձայնեցնել բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

3. Նախագծով նախատեսել և տեղադրել նոր, գործարանային արտադրության ժամանակակից սարքավորումներ, համապատասխան հզորության գազաբաշխիչ կայան (ԳԲԿ):


4. Շինարարության ամբողջ ընթացքում սպասելի է Պատվիրատուի կողմից տեխնիկական վերահսկողություն կամ կնքել պայմանագիր այլ կազմակերպությունների հետ այն իրականացնելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում նախագծային կազմակերպության միջոցով ապահովել հեղինակային հսկողություն:

5. Գազատարի հետ արհեստական արգելիքների և ինժեներական հաղորդակցուղիների հատման տեղերում, ինչպես նաև անցումը երանց պահպանման գոտիներով, անհրաժեշտ է ստանալ տեխնիկական պայմաններ այն շահագործող կազմակերպությունների կողմից:

6. Կառուցապատման ոլորտում իրավասու մարմնի լիազորություններով պայմանավորված ճարտարապետահատակագծային առաջադրանքը ձևավորել տեղադիրքային առումով նույն ուղղությամբ տեղաբաշխված կառուցապատողների կողմից նախատեսվող գազաֆիկացման աշխատանքների համակարգմամբ, որի դեպքում քաղաքաշինական և տեխնիկական պահանջների ընդհանուր լուծմամբ կապահովվի գազաբաշխիչ կայանի ընտրությունը և մեկ ուղեգծով գազատարի կառուցումը համաֆինանսավորման սկզբունքով:

Տեխնիկական պայմանների գործողության ժամկետը՝ մինչև 15.12.2023թ.

Տեխնիկական պայմանները կազմեց՝

«Տրանսգազ» ՍՊԸ ԳՀՇ և Ս գլխ. մասնագետ  Ա. Գրիգորյան

Համաձայնեցված է՝

«Տրանսգազ» ՍՊԸ ԳՀՇ և Ս բաժնի պետ  Ա. Գրիգորյան



«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
 ԵՐԵՎԱՆԻ ԳԱԶԻՖԻԿԱՑԻԱՆ ԵՎ ԳԱԶԱՍՏԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂ

ЗАО «Газпром Армения»  
 ЕРЕВАНСКИЙ ФИЛИАЛ ПО ГАЗИФИКАЦИИ И ГАЗОСНАБЖЕНИЮ

0025, 44, ք. Երևան, Շարենցի 141/3: 0025, РА, г. Ереван ул. Чаренца 141/3.  
 Գեո. /Гео: (+374 10) 53 45 00, Ֆաքս /Факс: (+374 10) 55 92 74; Է-մեյլ: yerevan@gazpromarmenia.am

15. 12. 2022թ.

№ 22-13/4796

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ  
 ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ  
 ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ  
 ՊԱՐՈՆ Ա. ՀԱԿՈՐՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Ա. Հակոբյան**

Հայտնում են Ձեզ, որ 12.12.2022թ. Երևանի ԳԳՄ է դիմել «Ազրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահունյանի Շրջանային Միավորում» ԲԲԸ տնօերնի լ/ա Ա. Նավոյանը, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի, Ս.Մարտիրոսյան փողոց թիվ 1 և 1/2 հասցեներում կառուցվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գազամատակարարման համար, անհրաժեշտ բնական գազի  $G=9500\text{մ}^3/\text{ժամ}$  ծախսով գազաֆիկացման տեխնիկական պայման տրամադրելու խնդրանքով:

Գործող գազաբաշխման համակարգի գերծանրաբեռնվածության պատճառով անթույլատրելի ճնշման անկումներից խուսափելու նպատակով, Երևանի ԳԳՄ կողմից սպասարկվող գազաբաշխման համակարգից հնարավոր չէ հատկացնել գազաֆիկացման տեխնիկական պայմաններ:

Կից ներկայացվում են լուսապատճենները՝ 5 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝


/ՏՆՕՐԵՆ

Վ.ԱՐՏԱՇԵՍՅԱՆ


և. Հովհաննիսյան  
 հեռ. 57-03-07, 22-55




### ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐ





4 շենքի 2ԱՏԱԳԱԳԻՍ -13.200 կիլոմ Մ 1:300

































































**ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ (ԴԵՆԴՐՈՆԱԽԱԳԻԾ)**

(Ստորև ներկայացված դենդրոնախագիծը Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցվել է 29.12.2022թ-ին)

**ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**


Աջափնյակ վարչական շրջան, Մարտիրոսյան հ.1 և հ.1/2




ԵՐԵՎԱՆ 2022





























|   |   |  |
|---|---|--|
| <br>Սոսի արևելյան 1    | <br>Արիցիա լենդրանյան 5 | <br>Արոսնի սոփորական 9            |
| <br>Սիրիական վարդ 2    | <br>Կաղնի ամառային 6    | <br>Ասպիրակ 10                    |
| <br>Սոճի դրիմյան 3     | <br>Կատալպա 7           | <br>Ֆորզիցիա 11                   |
| <br>Եղևնի կեոկևավոր 4 | <br>Արջատիլենի 8       | <br>525գ.մ. - 2605 հատ<br>Սամշիթ |
|   |   | <br>36120 ք.մ<br>Միզանարզ        |
|   |   | Շաղկանոց -280ք.մ - 1400 հատ  |

| Նախագծող | Է. Գրիգորյան | Գծագրի անվանումը                                       | Փուլ   | Նախագիծ                    |
|----------|--------------|--|--------|----------------------------|
|          |              | Շառատեսակների տնկման սխեմա համապատասխան հեռավորությամբ | Մաս    | Բարեկարգում և կանաչապատում |
|          |              |  | Թերթեր | Թերթ 7                     |

**ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ(ԲԿՊ)**

| Ծրագրի գործողություններ                              | Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ   | Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ   | Պատասխանատու և մարմին  | Մեղմացնող միջոցառումների հնդիկատիվ արժեքը գնահատվում է նախա-տեսվող գործունեության արժեքի մոտ 1,5% |
|--|---|--|--|---|
| <b>Ն Ա Խ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ</b>          |   |  |  |   |
| 1. Հանրային լսումներ, հանրության իրազեկում           | Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:   | 1.1. Բազմաբնակարան համալիրի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացրվել է 2023 թ. հունվարի 23-ին՝ ժամը 15:00-ին Երևանում: Հանրային քննարկման հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի հունվարի 12-ի համարում: | «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ                      |   |
| 2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում | ԲԿՊ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ բնակելի համալիրի շինարարության և շահագործման փուլերում: | 2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:  | Մշակվել է «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ-ի պատվերով |   |
| <b>Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ</b>               |   |  |  |   |
| <b>Առողջություն և աշխատանքային անվտանգություն</b>    |   |  |  |   |
| 3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները     | ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և բնակելի համալիրի կառուցման բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը   | 3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:  | Կապալառու  |   |

|   |   |  |  |  |
|---|---|--|--|--|
|   | <p>կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշտած կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է:</p> | <p>3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ):</p> <p>3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն):</p> <p>3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում:</p> <p>3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանական միջոցներով:</p> <p>3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել:</p> <p>3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:</p> <p>3.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:</p> | <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> |  |
| <b>Հանրության հետ կապ և հանրային իրազեկում</b>                  |   |  |  |  |
| <p>4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p> | <p>Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:</p>             | <p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ ազդակիրները կտեղեկացվեն ԲԱՄ-ի մասին, համաձայն որի նրդրման.</p> <p>Ա: Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին:</p> <p>Բ: Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների</p>  | <p>«Ազրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ</p> <p>Կապալառու</p>                                    |  |

|   |   |  |  |  |
|---|---|--|--|--|
|   |   | <p>գրանցամատյան (բողոքի գրանցման ձևը՝ տես <a href="#">Հավելված 11</a>-ում) և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լուծման վերաբերյալ:</p>  | Կապալառու  |  |
| <b>Շրջակա միջավայրի պահպանություն</b>   |   |  |  |  |
| <p>5. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ</p> | <ul style="list-style-type: none"> <li>Առևտրի կենտրոնին հարակից տարածքում առկա մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի և այլ հանրային կառույցների վրա գնահատվում են.</li> </ul> <ol style="list-style-type: none"> <li>Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը;</li> <li>Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թթթումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը:</li> </ol> | <p><b>5.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում</b></p> <p>5.1.1. Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում:</p> <p>5.1.2. Օդի որակի չափագրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար;</p> <p>5.1.4. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով:</p> <p><b>5.2. Աղմուկի և թթթումների կառավարում</b></p> <p>5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թթթումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափագրումներ կիրականացվեն ըստ անհաժեշտության՝ ազդակիր անձանց կողմից բողոքի դեպքում:</p> <p>5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին:</p> <p>5.2.3. Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում:</p> <p>5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում:</p> <p><b>5.3. Բուսականության պահպանության կառավարում</b></p> <p>5.3.1. Հնարավոր վնասման ենթակա ծառերի և թփերի</p> | <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>«Ազրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> |  |

|  |  |   |  |   |
|--|--|---|--|---|
|  |  | պահպանման միջոցառումների իրականացում՝ ուղղված դրանց պաշտպանությանը շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից (պաշտպանիչ պաստառներ, ջրցանում) և հնարավոր այլ ազդեցություններից:  |  |   |
| <b>Շինարարական հրապարակի կազմակերպում</b>    |  |   |  |   |
| 6. Շինհրապարակի կազմակերպում                 | Շինհրապարակի կազմակերպումից ազդեցություններ  | ոչ ճիշտ բխող  | <p>6.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում:</p> <p>6.2. Շին հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>6.3. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>6.4. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախազգուշացնող նշաններ:</p> | <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> |
| <b>Երթևեկության կառավարում</b>               |  |   |  |   |
| 7. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ | Երթևեկության հնարավոր ազդեցություններն են. <ul style="list-style-type: none"> <li>• երթևեկության խափանումներ</li> <li>• երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ</li> <li>• փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ</li> <li>• հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում</li> <li>• շինարարական ծանր սարքավորումների և</li> </ul> | <p>7.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով;</p> <p>7.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը:</p> <p>7.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար</p> | <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>   |   |

|  |   |  |  |  |
|--|---|--|--|--|
|  | <p>փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին վնաս</p>   | <p>նվազագույն խոչընդոտներով:</p> <p>7.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>7.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p> <p>7.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>7.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</p> <p>7.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</p>  | <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> |  |
| <b>Արտակարգ իրավիճակների կառավարում</b>  |   |  |  |  |
| <p>8. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)</p> | <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p> | <p>8.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում:</p> <p>8.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</p> <p>8.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին:</p> <p>8.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:</p> <p>8.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>8.6. Շինարարական աշխատանքների տեղամասերում</p> | <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> |  |



|   |   |  |                                   |  |
|---|---|--|-----------------------------------|--|
|   |   | <p>տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>8.7. Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>8.8. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>8.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</p> <p>8.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն (<a href="#">Հավելված 13</a>):</p> | Կապալառու                         |  |
| <b>Թափոնների և նյութերի կառավարում</b>          |   |  |                                   |  |
| <p>9. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ</p> | <p>Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից</p> | <p>9.1. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար:</p> <p>9.2. Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ</p>   | <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> |  |

|   |   |  |   |  |
|---|---|--|---|--|
|   | ներկայացնում են պոտենցիալ վտանգ:  | <p>տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր:</p> <p>9.3. Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում:</p> <p>9.4. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>9.5. Կենցաղային աղբի հավաքումը և պարբերաբար հեռացումը անհրաժեշտ է իրականացնել թույլատրված աղբավայրում:</p> <p>9.6. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին.աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:</p> | Կապալառու<br><br>Կապալառու<br><br>Կապալառու<br><br>Կապալառու                                  |  |
| <b>Աշխատողների վերապատրաստում</b>                       |   |  |   |  |
| 10. Աշխատողների վերապատրաստում                          | Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:   | <p>10.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն;</p> <p>10.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողկարգի մասին;</p>   | «Ազրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ<br><br>Կապալառու<br><br>Կապալառու |  |
| <b>Աշխատանքային տեղամասի վերականգնում և բարեկարգում</b> |   |  |   |  |
| 11. Շինհրապարակի վերականգնում և տարածքի բարեկարգում     | Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը, թափոնները և այլն: | <p>11.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն:</p> <p>11.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;</p> <p>11.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;</p>  | Կապալառու<br><br>Կապալառու<br><br>Կապալառու<br><br>Կապալառու                                  |  |

|   |  |  |           |  |
|---|--|--|-----------|--|
|   |  | 11.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները:                |           |  |
| <b>Հ Ե Տ Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն Փ ՈՒ Լ</b> |  |  |           |  |
| 12. Թերությունների վերացման աշխատանքներ                         | Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները | 12.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացումը: | Կապալառու |  |

**ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ**

| Վայրը/<br>Գործողությունը/<br>Փուլը                 | Մոնիտորինգի<br>ենթակա<br>պարամետրեր  | Մոնիտորինգի<br>կետեր  | Մոնիտորինգի<br>գործիքներ/<br>մեթոդներ   | Բնապահպանական<br>գործողությունների<br>ցուցանիշ  | Պատասխանատուներ   | Մոնիտորինգի<br>հաճախակա-<br>նություն                        |
|--|--|---|---|---|---|---|
| <b>Շ Ի Ն Ա Բ Ա Բ ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ</b>             |  |   |   |   |   |   |
| 1. Հանրային լուծումներ<br>և կապը<br>հանրության հետ | - Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ                             | շին. հրապարակ   | - փաստաթղթերի ստուգումներ,<br>- տուգայցեր շին տեղամասեր,<br>- հանրային լուծումներ,  | Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է բոլոր պահանջներին համապատասխան   | «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ Կապալառու | Հանրային լուծումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը |
| 2. Շրջակա միջավայրի պահպանություն                  | - փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ,<br>- աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում | շին. հրապարակ,  | - ակնադիտական ստուգումներ՝ շինհրապարակ ստուգայցերի միջոցով,<br>- բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում;<br>- ըստ անհրաժեշտության՝ փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում: | - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը,<br>- փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում       | «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ Կապալառու | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան                      |
| 3. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր           | - շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը:                               | Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ: | - փաստաթղթերի ստուգում  | - Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից թույլատրված և տարածքին,<br>- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու | «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ Կապալառու | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան                      |

|   |   |   |   |   |   |  |
|---|---|---|---|---|---|--|
|   |   |   |   | կարևորությունը  |   |  |
| 4. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը                             | <ul style="list-style-type: none"> <li>- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը;</li> <li>- հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհներին և այլ կառույցներին պատճառվող վնասներ:</li> </ul> | Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շինհրապարակի մոտեցման մուտքերը | <ul style="list-style-type: none"> <li>- փաստաթղթերի ստուգում,</li> <li>- շինհրապարակ կատարած ստուգայցեր</li> </ul>   | <ul style="list-style-type: none"> <li>- երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը,</li> <li>- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը</li> </ul>   | «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ Կապալառու | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |
| 5. Թափոնների և շին. նյութերի կառավարում                                     | <ul style="list-style-type: none"> <li>- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում</li> </ul>  | շին. հրապարակ   | <ul style="list-style-type: none"> <li>- փաստաթղթերի ստուգում,</li> <li>- շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր</li> </ul>   | <ul style="list-style-type: none"> <li>- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում,</li> <li>- թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:</li> </ul> | «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ Կապալառու |  |
| 6. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, | <ul style="list-style-type: none"> <li>- շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են,</li> <li>- բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված</li> </ul>  | Տեղամասեր կատարած ստուգայցեր  | <ul style="list-style-type: none"> <li>- Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>- Պահպանված են շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կոլտուրայի, անվտանգության կանոնները,</li> </ul>   | «Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ           |  |

|   |  |  |   |  |   |  |
|---|--|--|---|--|---|--|
| <p>սանիտարահիիեն իկ կանոնների պահպանում, կանաչապատում և տարածքի բարեկարգում</p> | <p>տարածքները վերականգնված են,<br/>- շինհրապարակի տարածքը բարեկարգված է:</p> |  | <p>հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին:<br/>- Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրություն պահանջների:<br/>- Շինհրապարակի վերականգնման և բարեկարգման պլանն առկա է:<br/>- Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:</p> | <p>- ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից,</p>  | <p>Կապալառու</p>  |  |
| <b>Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ</b> |  |  |   |  |   |  |
| <p>7. Թերությունների վերացման աշխատանքներ</p>                                   | <p>- Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ</p>        | <p>բնակելի համալիրի տարածքի սահմաններում</p> | <p>Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից</p>  | <p>Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափագրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին:</p> | <p>«Ագրոսպասարկում» Ա/Մ-ի «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ, Կապալառու</p> |  |
| <p>8. Տարածքի բարեկարգում</p>   | <p>Թփերի և այլ բուսականության նորմալ աճ</p>                                  | <p>Բարեկարգման բոլոր</p>                     | <p>Ստուգայցեր</p>   | <p>Թփերի և խոտածածկույթի սանիտարական</p>   | <p>«Ագրոսպասարկում» Ա/Մ-ի</p>   |  |

|  |  |            |  |                    |                                      |  |
|--|--|------------|--|--------------------|--------------------------------------|--|
|  |  | տեղամասերը |  | վիճակի ստուգումներ | «Շահումյանի շրջանային միավորում» ԲԲԸ |  |
|--|--|------------|--|--------------------|--------------------------------------|--|





### Մասնակիցների ցանկ

2023թ-ի հունվարի 23-ին ժամը 15:00-ին ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի շենքում (հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Ա. Սարգսյան փ. 5) Աջափնյակ վարչական շրջան, Մարտիրոսյան փողոց հ. 1 և հ. 1/2 հասցեների հողամասերում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծի վերաբերյալ հանրային ծանուցման և քննարկումների (1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

| N   | Անուն, ազգանուն        | Կազմակերպություն/պաշտոն                            | Հեռախոսահամար | Ստորագրություն |
|-----|------------------------|--|---------------|----------------|
| 1.  | Վ. Բաբայան Կարապետ     | ԴՄԻՊ Բառամբարյան<br>ՀԻՊՈ, համաձայնագրող            | 091223690     |                |
| 2.  | Վ. Կարապետյան          | ԴՄԻՊ Բառամբարյան                                   | 094588830     |                |
| 3.  | Գ. Բաբայան Շիրազ       | Հարցազրույց  | 091557014     |                |
| 4.  | Ս. Գրիգորյան           | Եկեղեցի  | 099881801     |                |
| 5.  | Բ. Բաբայան             | « Բառամբարյան - ՀԱՏ<br>Մարտիրոսյան փողոց 469»      | 091-340103    |                |
| 6.  | Ա. Կարապետյան          | Աջափնյակ վարչական շրջանի<br>գեղարվեստի վարչակազմ   |               |                |
| 7.  | Պետրոս Կարապետյան      | Այսօրվա հասցե՝ 2122<br>գեղարվեստի վարչակազմ        |               |                |
| 8.  | Պրոֆ. Արմեն Կարապետյան | Նշանակի փոփոխություն                               | 011-514-263   |                |
| 9.  | Ստեփան Կարապետյան      | Հ. Գ. Սարգսյան փողոց 469<br>և Կարապետյան փողոց 469 | 077-367207    |                |
| 10. | Ռոման Արմենյան         | Երևանի համալսարան<br>Քաղաքաբարձրություն            | 077-560160    |                |
| 11. | Զարգար Բաբայան         | Քաղաքաբարձրություն                                 | 077-45-02-65  |                |
| 12. | Ն. Կարապետյան          | Վճարային կազմակերպություն                          |               |                |
| 13. |                        |  |               |                |
| 14. |                        |  |               |                |
| 15. |                        |  |               |                |
| 16. |                        |  |               |                |
| 17. |                        |  |               |                |
| 18. |                        |  |               |                |
| 19. |                        |  |               |                |
| 20. |                        |  |               |                |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Աջափնյակ վարչական շրջան, Մարտիրոսյան փողոց հ. 1 և հ. 1/2 հասցեների հողամասերում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների*

2023թ-ի հունվարի 23-ին, ժամը 15:00-ին ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի շենքում (հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Ա. Մարգարյան փ. 5) տեղի ունեցան Աջափնյակ վարչական շրջան, Մարտիրոսյան փողոց հ. 1 և հ. 1/2 հասցեների հողամասերում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2023 թ-ի հունվարի 12-ի թիվ 4 (7895):

Հանդիպմանը մասնակցում էին Աջափնյակ վարչական շրջանի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, նախագծային ընկերության («Բաբայան-ԼԱՏ նախագիծ» ՍՊԸ), նախագծի պատվիրատու ընկերության («Ազրոսպասարկում» ԱՄ ՇՇՄ ԲԲԸ) և նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման և հանրային լուծումների կազմակերպման պատասխանատու ընկերության («Ի ՄԻ Ի Քաուրբաուս» ՍՊԸ), ներկայացուցիչները:

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Գ. Ավետիսյանը ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանդիպման նպատակը և խոսքը փոխանցեց հանրային լուծումների կազմակերպման պատասխանատու ընկերության ներկայացուցիչ Մ. Վարդանյանին:

Մ. Վարդանյանը ողջունեց մասնակիցներին և հայտնեց, որ հանդիպման նպատակն է «Աջափնյակ վարչական շրջան, Մարտիրոսյան փողոց հ. 1 և հ. 1/2 հասցեների հողամասերում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում» նախատեսվող գործունեության ներկայացումն ու քննարկումը: Նա նշեց, որ հանրային քննարկման պահանջը սահմանված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, համառոտ ներկայացրեց ընթացակարգը՝ նշելով որ հանրությունը և համայնքը պատշաճ կերպով ծանուցվել են: Նախատեսվող գործունեությունը համաձայն նշված օրենքի, իր զբաղեցրած մակերեսով՝ 22150 ք.մ, դասակարգվում է որպես Գ կատեգորիայի գործունեություն, որի համար օրենքով նախատեսված է 2 հանրային քննարկման կազմակերպում:

Մ. Վարդանյանը ներկաներին ներկայացրեց նախագծում ներգրավված կողմերին և իրավական շրջանակը, ինչպես նաև նախատեսվող գործունեության համառոտ նկարագիրը, որոշ տեխնիկական ցուցանիշները և բնապահպանական միջոցառումները: Նշվեց, որ ընդհանուր շինարարական աշխատանքների ընթացքում կլինեն որոշակի ժամանակավոր ազդեցություններ շրջակա միջավայրի վրա՝ մասնավորապես աղմուկի, փոշու արտանետմամբ պայմանավորված, և ձեռնարկող ընկերության խնդիրն է այդ ազդեցությունները պահել թույլատրելի նորմաների սահմաններում: Այդ ազդեցությունները նվազեցնելու նպատակով նախատեսված են միջոցառումներ, ինչպիսիք են փոշենատեցումը ջրով, շինհրապարակի ցանցապատումը, աղմուկի խլացուցիչների օգտագործում և սահմանափակ աշխատանքային ժամերի պահպանումը: Այնուհետև Մ. Վարդանյանը

ներկաներին հորդորեց բարձրաձայնել իրենց մտահոգությունները և իրենց հուզող հարցերը:

Այնուհետև ներկաները քննարկեցին նախատեսվող գործունեությանը վերաբերող ընդհանուր հարցերը. թաղամասի փուլերով շինարարության մոտեցումը, որպեսզի նվազեցվի փոշու քանակը: Թաղամասի ճանապարհային ցանցը: կանաչապատման և ոռոգման հարցերը:

**Ռ. Ալոյանը** հարց բարձրացրեց ենթակառուցվածքների՝ մասնավորապես ջրագծերի և կոյուղագծերի մասին, քանի որ թաղամասի մոտակայքում գոյություն չունեն մեծ մագիստրալներ:

**Չ. Բաբայանը** պարզաբանեց, որ կունենալ ծառայությունների տեխնիկական պայմանները առկա են և, հաշվի առնելով թաղամասի մեծությունը, նախատեսվում է կոյուղատարը միացնել Հյուսիս-Հարավ մագիստրալի հատվածին: Ինչպես նաև նախատեսվում է ապահովել տրանսպորտի առկայությունը:

Քննարկվեց Մարտիրոսյան փողոցի ճանապարհային ցանցը: Նշվեցին նաև տվյալներ կանաչապատ գոտու մասին, որի համար կստեղծվի ոռոգման ցանց: Նշվեց նաև, որ թաղամասը կլինի պարսպով փակ:

Վարչական շրջանի ներկայացուցիչները ողջունեցին նախատեսվող գործունեությունը և հույս հայտնեցին, որ այն դրական ազդեցություն կունենա ընդհանուր վարչական շրջանի համար:

Ներկաները քննարկեցին նախատեսվող շինարարության տեմպերը, շենքերի բարձրությունը և սեյսմիկ ռիսկերը:

Այլ հարցեր չեն նշեցին և Գ. Ավետիսյանը շնորհակալություն հայտնեց և ամփոփեց հանդիպումը:

**Քննարկումների վարող և պատասխանատուի ներկայացուցիչ՝**

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ

**Գ. Ավետիսյան**

**Քննարկումների արձանագրող՝**

«Ի ՍԻ Ի Քառուքագու» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

**Մ. Բաբայան**

**Ձեռնարկողի ներկայացուցիչ՝**

«Ագրոսպասարկում» ԱՄ ՇՇՄ ԲԲԸ -ի ներկայացուցիչ

**Չ. Գրիգորյան**

# ՀԱՎԵԼՎԱԾ 11. ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ



## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 17/12609-23

«ԱԳՐՈՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԱՄ ՇՇՄ» ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՏՆՕՐԵՆ Մ. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ  
(Ք. Երևան, Հաղթանակի 1փող., հ. 46 շ.)

### Հարգելի՛ պարոն Պողոսյան,

Ի պատասխան Ձեր 2023 թվականի հունվարի 17-ի Երևանի քաղաքապետարան ուղղած հ. 03 (գրանցման համար՝ Դ-6779-23) գրության, հայտնում եմ, որ Երևանի քաղաքապետարանը Ձեր կողմից ներկայացված Աջափնյակ վարչական շրջանի Մարտիրոսյան փողոց հի. 1 և 1/2 հասցեներում բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2023 թվականի հունվարի 23-ին ժամը՝ 12:00-ին տեղի ունեցած 1-րդ հանրային քննարկմանն ապահովել է համայնքի ներկայացուցչի մասնակցությունը:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տալիս եմք նախնական համաձայնություն պայմանով, որ նախնական գնահատման հայտում որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է ներառել.

- նոր կառուցվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրում էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումների նկարագրությունը՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների.
- շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվազման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման պահանջների նկարագրությունը.
- հանրային քննարկման ժամանակ բարձրացված հարցադրումները:

Կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն աշխատակազմի բնապահպանության վարչություն ներկայացված և հաստատված կանաչապատման նախագծի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ

Invalid signature

X


ԳԱՅԱՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Signed by: NERSISYAN GAYANE 7104810033 **ԳԱՅԱՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ԿԱՏ.՝ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԵՌ. 011-514-263

**ՀԱՎԵԼՎԱԾ 12. «ԱԳՐՈՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ԱՄ ՇՇԱ» ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔԸ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐԴԱՎԱՂԱՏՈՒԹՅԱՆ ԼԵԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ**  
**ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ** առ 2023-03-16

**«ԱԳՐՈՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ԱՄ/ՄԻ «ՇՆՇՈՒՄՅԱՆ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ»**  
**Քաղ յանձնադրական ընկերություն (ՔԲԸ)**

|  |   |
|--|---|
| Գրանցման համար   | 290.130.01566   |
| Հիմնադրման տարի  | 1996  |
| Գրանցման ամսաթիվ   | 1996-12-17  |
| Գործունեության ժամկետ  | Անժամկետ  |
| Կարգավիճակ   | Իրազարման անձի յուրաքանչյուր գործընկերոջը հանձնվող կամ գործունեության (գյուղային) դադարման ժամն պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրանցված չեն: |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՉԿԴ)   | 28511179  |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)  | 01801497  |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրողի ծածկագիր) | 48131566  |
| Էլ. փոստ   | -   |
| Կայք   | -   |


**Գտնվելու վայրը**

|         |   |
|---------|---|
| Հասցե   | ՀԱՂԱՅԱՆԿԻ Փ. / 1 / 46 ՄԱԼԱԹԻՎ-ՍԵՐԱՍԿԱ 0081 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |
| Շենքետա | -   |


**Գործադիր մարմնի ղեկավար**

|                      |  |
|----------------------|--|
| Պաշտոն               | Տնօրեն   |
| Անուն Ազգանուն       | ՄԵԼԱՆՑԱ ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ                                       |
| Անձնագրային տվյալներ | AT0567484 2020-09-22 011   |
| Հասցե                | ՊԱՐՈՆՑԱՆ Փ. / Ե / 1 / ՔԼ. 30 ԿԵԼՏՐՈՆ 0015 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |

*(Handwritten signatures)*







**ՀԱՎԵԼՎԱԾ 13. ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻՑ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ**

Հավելված 13 – ը ներկայացվում է առանձին խտանիշքով՝ ապահովելու համար բարձր լուծաչափը և ընթառնելիությունը:

**ՀԱՎԵԼՎԱԾ 14. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ**

Հավելված 14-ը կցվում է առանձին ֆայլով pdf ֆորմատով:

**ՀԱՎԵԼՎԱԾ 15. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

Հավելված 15-ը կցվում է առանձին ֆայլով pdf ֆորմատով: